

Ազգային

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1991 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 22 ՅՈՒՆԻՍ 2015
• VOL. XXXVI, NO 1991 • LUNDI, 22 JUIN 2015 • MONDAY, JUNE 22, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Տիարաբեքիրի հայկական եկեղեցին արժանացած է «ԵՄ մշակութային ժառանգութեան» մրցանակին



Հինգշաբթի՝ 11 Յունիս 2015-ին, Նորվեգիոյ մայրաքաղաք Օսլոյի մէջ կայացած է «Եւրոմիութեան մշակութային ժառանգութիւն եւ Europa Nostra» մրցանակաբաշխութեան հանդիսաւոր արարողութիւնը: Տիարաբեքիրի հայկական եկեղեցին արժանացած է «ԵՄ մշակութային ժառանգութեան» մրցանակին: Տիարաբեքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցիին շնորհուած է «Մեծ մրցանակ», կը յայտնէ Ermenihaber-ը:

Մրցանակաբաշխութեան ներկայացուած եղած են բազմաթիւ մշակութային նախագիծեր, որոնց ուսումնասիրութիւններուն մասնակցած են աշխարհի տարբեր երկիրներէ ժամանած մշակութային ժառանգութեան 600 մասնագետ եւ բազմաթիւ կամաւորներ: Ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ Օսլոյի քաղաքապետն ու Նորվեգիոյ բնապահպանութեան նախարարը:

Մրցանակաբաշխութեան ընդհանուր առմամբ շնորհուած է 7 «Մեծ մրցանակ»:

Մասաչուսեթսի Ռապպիները Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու կոչ կ'ուղղեն Թուրքիոյ, ԱՄՆ-ին եւ Իսրայելին

ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ռապպիներու վարչութիւնը Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով իր համերաշխութիւնն ու ցաւակցութիւնը յայտնած է՝ աշխարհին կոչ ընելով ճանչնալու «1915-1923-ին Անատոլիոյ մէջ կատարուածը», - կը գրէ armenianweekly.com-ը:

«Մենք Անատոլիոյ անապատներուն մէջ Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմէ իրականացուած վայրագութիւններուն համընդհանուր ճանաչման կոչ կ'ընենք: Միայն ճշմարտութիւնը ընդունելով կրնանք երաշխաւորել «այլեւս երբեք»-ը», - նշուած է տարածուած յայտարարութեան մէջ:

Ռապպիները իրենց կոչին մէջ յիշեցուցած են Մորկենթաուի վկայութիւնները, ճշմարտութեան անհրաժեշտութիւնը եւ Էլի Ռիզելի միտքը՝ լռութեամբ հայերը կրկնակի չսպանելու մասին: «Մենք կը յիշենք հարիւրաւոր հայ մտաւորականներու, գրողներու, նկարիչներու, բժիշկներու, իրաւաբաններու, համայնքային եւ քաղաքական առաջնորդներու ձերբակալութիւնները 1915-ի Ապրիլ 24-ին: Կը յիշենք անապատին մէջ մահուան երթերը, իրենց պատմական հայրենիքին մէջ սպաննուած 1.5 միլիոն հայերը, կայսրութեան մէջ ԱՄՆ դեսպան Հենրի Մորկենթաուի եւ միւսներու կոչը աշխարհին՝ արձագանգել այդ ամենուն: Մենք կը յիշենք շարունակուող ժխտողականութիւնը եւ ամօթը՝ մերժելով ճանչնալ կատարուածն ու կոչել զայն ինչպէս որ եղած է»:

Այսպիսով կոչ կ'ուղղուի օսմանեան թուրքերու ժառանգներուն ճանչնալու, իսկ ԱՄՆ-ի հրեական համայնքին ճանչնալու եւ ներողութիւն խնդրելու Հայոց Ցեղասպանութեան հարցով մինչեւ այսօր իրենց լռութեան համար:



Նալբանդեան. «Ղարաբաղեան Հարցի Մասին Զեկուցում Պատրաստելու Եխիսվ-ի Որոշումը Կրնայ Վնասել Բանակցային Հոլովոյթին»



Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Հինգշաբթի՝ 11 Յունիս 2015-ին, ընդունեց Եւրոպական խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) համազեկուցողներ Աքսել Ֆիշըրը եւ Ալան Միլը:

Հանդիպման ընթացքին, խօսելով ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ լուծման ուղղութեամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ-ի

Միսքի խմբակի համանախագահներուն կողմէ գործադրուող ջանքերուն մասին՝ նախարար Նալբանդեան ըսաւ, որ ղարաբաղեան հիմնախարցին մասին զեկուցում պատրաստելու ԵԽՆՎ-ի որոշումը կրնայ վնաս հասցնել եռանախագահներու գործունեութեան եւ ընդհանրապէս բանակցային հոլովոյթին:

Չորս հայ քաղաքացիներ զոհուած են Թիֆլիսի ջրհեղեղէն



Թիֆլիսի ջրհեղեղէն զոհուած հայերուն թիւը աւելցած է եւս մէկով: Յայտնի է նաեւ չորրորդ զոհին անունը՝ Նանա Թիլիշվիլի-Եղիազարովա: Այս մասին «Արմենփրես»-ին տեղեկացուցած է ՀՀ արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Տիգրան Բալայեանը:

Աւելի առաջ Վրաստանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը յայտնած է Թիֆլիսի մէջ տեղի ունեցած ջրհեղեղի հետեւանքով զոհուած Վրաստանի քաղաքացի հանդիսացող երեք հայեր՝ Ժաննա Եղիազարովան, Սվետլանա Եղիազարովան եւ Լիանա Եղիազարովան:

Քանի որ անյայտ կորածներ կան, զոհերուն թիւը կը փոփոխուի:

Հայաստանի եւ Իրանի միջեւ պիտի ջնջուի անցագրի դրութիւնը

Թեհրանի մէջ, Հայաստանի եւ Իրանի Արտաքին գործոց նախարարութիւններու պատասխանատուներ բանակցութիւններու ձեռնարկած են երկու երկիրներու միջեւ անցագրի դրութիւնը ջնջելու կարելիութիւնները ուսումնասիրելու համար:

Բանակցութիւններու ընթացքին քննարկուած են նաեւ հիւպատոսական այլ հարցեր:

Նախագահ Սարգսյան Ընդունեց Երոպական Խորհուրդի Գրասենեակի Նոր Ղեկավարը

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյան երեկ ընդունեց Հայաստանի մեջ Երոպական խորհուրդի գրասենեակի նոր նշանակուած ղեկավար Նաթալիա Վուլթովան:

Հանրապետության նախագահը շնորհավորեց Վուլթովան՝ Հայաստանի մեջ գործունեությունը սկսելու կապակցությամբ եւ մաղթեց յաջողություն: Ընդգծելով Երոպական խորհուրդի կարեւոր եւ ուրոյն տեղը Երոպայի ընդհանուր ճարտարապետության մեջ՝ Սերժ Սարգսյան նշեց, որ Հայաստան իբրեւ Երոպական խորհուրդի անդամ երկիր, հետաքրքրուած է Երոպական խորհուրդի բոլոր կառույցներուն հետ համագործակցութեամբ:

Ըստ նախագահին, Երոպական խորհուրդի չափանիշները՝ մարդկային իրաւունքներու, ժողովրդավարութեան, օրէնքի գերակայութեան մարգերուն մէջ, Հայաստանի համար լաւ ուղեւիշներ են, եւ մեր երկիրը հասած է որոշ արդիւնքներու՝ իբրեւ Երոպական խորհուրդի անդամ եւ իբրեւ այդ անդամակցութեամբ պարտաւորութիւններ ունեցող պետութիւն, որ կը փորձէ կատարել ստանձնած պարտաւորութիւնները:

Չրուցակիցները համակարծիք եղան, որ Հայաստանը՝ իբրեւ Երոպական խորհուրդի անդամ երկիր, աշխուժ մասնակցութիւն ունի կազմակերպութեան աշխատանքներուն բոլոր մակարդակներուն վրայ:

Հանրապետության նախագահը բարձր գնահատեց Երոպական խորհուրդի աջակցութիւնը Հայաստանի մէջ ընթացող ժողովրդավարական բարեփոխումներուն եւ ներկայացուց շարք մը ուղղութիւններով երկրին մէջ իրականացուող բարեփոխումներու ընթացքը՝ անդրադառնալով նաեւ Վենետիկի յանձնաժողովին հետ սերտ համագործակցութեամբ իրականացուող Հայաստանի սահմանադրական բարեփոխումներու հոլովոյթին: Նաթալիա Վուլթովա ընդգծեց, որ Երոպական խորհուրդը կ'աջակցի Հայաստանին՝ երկրին մէջ բարեփոխումներու իրականացման եւ ժողովրդավարութեան ամրապնդման ճամբուն վրայ: Ան գոհունակութեամբ խօսեցաւ Երոպական խորհուրդի նախարարներու խորհուրդի նախագահութեան մէջ 2013 թուականին Հայաստանի նախագահութեան մասին՝ ընդգծելով, որ վեցամսեայ ժամկետի մէջ բարձր մակարդակով եւ պատուով իրականաց-



լած Հայաստանի առաքելութիւնը, սահմանուած գերակայութիւնները Երոպական խորհուրդի մէջ արժանացած են նաեւ կազմակերպութեան ղեկավարութեան դրական գնահատականներուն: Ըստ անոր, յաջողութեամբ իրականացուած այդ նախագահութիւնը կը մնայ Երոպական խորհուրդի պատմութեան մէջ: Նաթալիա Վուլթովա յոյս յայտնեց, որ նկատի առնելով Երոպական խորհուրդի հետ Հայաստանի արդիւնաւետ համագործակցութիւնը եւ ցարդ Հայաստան-Երոպական խորհուրդ գործողութիւններու ծրագրի իրականացման ընթացքին արձանագրուած դրական արդիւնքները, Երոպական խորհուրդի գործողութիւններու նոր ծրագիրը եւս նոյնպիսի յաջողութեամբ իրականացուի:

լած Հայաստանի առաքելութիւնը, սահմանուած գերակայութիւնները Երոպական խորհուրդի մէջ արժանացած են նաեւ կազմակերպութեան ղեկավարութեան դրական գնահատականներուն: Ըստ անոր, յաջողութեամբ իրականացուած այդ նախագահութիւնը կը մնայ Երոպական խորհուրդի պատմութեան մէջ: Նաթալիա Վուլթովա յոյս յայտնեց, որ նկատի առնելով Երոպական խորհուրդի հետ Հայաստանի արդիւնաւետ համագործակցութիւնը եւ ցարդ Հայաստան-Երոպական խորհուրդ գործողութիւններու ծրագրի իրականացման ընթացքին արձանագրուած դրական արդիւնքները, Երոպական խորհուրդի գործողութիւններու նոր ծրագիրը եւս նոյնպիսի յաջողութեամբ իրականացուի:

լած Հայաստանի առաքելութիւնը, սահմանուած գերակայութիւնները Երոպական խորհուրդի մէջ արժանացած են նաեւ կազմակերպութեան ղեկավարութեան դրական գնահատականներուն: Ըստ անոր, յաջողութեամբ իրականացուած այդ նախագահութիւնը կը մնայ Երոպական խորհուրդի պատմութեան մէջ: Նաթալիա Վուլթովա յոյս յայտնեց, որ նկատի առնելով Երոպական խորհուրդի հետ Հայաստանի արդիւնաւետ համագործակցութիւնը եւ ցարդ Հայաստան-Երոպական խորհուրդ գործողութիւններու ծրագրի իրականացման ընթացքին արձանագրուած դրական արդիւնքները, Երոպական խորհուրդի գործողութիւններու նոր ծրագիրը եւս նոյնպիսի յաջողութեամբ իրականացուի:

Ատրպէյճան Արգիլած Է Բրիտանական «Կարտիըն»-ին Լուսաբանել Պաթուհի Խաղերը

Ատրպէյճանի կառավարութիւնը արգիլած է Երոպական խաղերու բացումը լուսաբանելու նպատակով բրիտանական «Կարտիըն», ինչպէս նաեւ շարք մը այլ լրատուամիջոցներու եւ իրաւապաշտպաններու երկիր մուտքը:

Ուրբաթ, Յունիս 12-ին սկսող խաղերուն կը մասնակցին 50 երկիրներէ մօտաւորապէս 6000 մարզիկներ: Բրիտանիա 160 մարզիկ ուղարկած է Պաթու:

Երոպական խաղերը լուսաբանելու հաւատարմագրման համար Պաթուհի դիմած էր «Կարտիըն»-ի մարզական աւագ լրագրողը: Դիմումը նախ հաստատ-

ւած էր, սակայն Յունիս 11-ի առաւօտեան, բրիտանացի լրագրողի թռիչքէն միայն երեք ժամ առաջ յայտնի դարձած է, որ դիմումը մերժուած է:

Թերթին պատասխանատուները կը յայտնեն, թէ որոշումը հաւանաբար կապ ունի Դեկտեմբերին հրապարակուած եւ Երոպական խաղերու նախապատրաստական աշխատանքներուն վերաբերեալ թերթին յօդուածին հետ, ուր ըսուած էր, թէ ընդդիմութիւնն ու խօսքի ազատութիւնը ճնշող Ատրպէյճան կը փորձէ միջազգային վարկը բարելաւել նման միջոցառումներ իրականացնելով:

Հայոց Յեղասպանութեան առնչուող հարցով տուն կանչուած դեսպանները պիտի չվերադառնան

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Թանժու Պիլիկիչ անդրադարձած է Պրագիլի կողմէ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ որդեգրուած բանաձեւին:

Ըստ անոր, «հայկական պնդումներուն» նկատմամբ Թուրքիոյ քաղաքականութիւնը չէ փոխուած:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք Թուրքիան Յեղասպանութեան հարցին գծով նոր մօտեցում պիտի ցուցաբերէ, եւ Պրագիլէն տուն կանչուած դեսպանը ե՞րբ պիտի վերադառնայ, Պիլիկիչ ըսած է. «Մեր Երոպական Միութեան նախարարը ո՛չ միայն 1915 թուականի իրադարձութիւններուն, այլ նաեւ այլ գործօններու մասին

յայտնեց, սակայն, ընդհանուր առումով, այդ բանաձեւը մեզի համար անընդունելի է: Այսպէս կոչուած ցեղասպանութեան պնդումներուն հարցին առնչութեամբ քաղաքականութեան որեւէ փոփոխութիւն պիտի չըլլայ: Այս հարցին գծով ի՛նչ մօտեցում, որ ցուցաբերած ենք միւս երկիրներուն նկատմամբ, պիտի ցուցաբերենք նաեւ Պրագիլի նկատմամբ: Այդ արտայայտութիւնը առաջին անգամ օգտագործած երկիրներուն մէջ հաւատարմագրուած մեր դեսպանները կանչած էինք խորհրդակցութիւններու, եւ առայժմ անոնք պիտի չվերադառնան իրենց պաշտօններուն»:

Թանժու Պիլիկիչ դարձեալ կրկնած է թուրք գործիչներուն՝ «պատմա-



բաններու յանձնախումբ ստեղծելու» միտքը:

ՀՀ քաղաքացիները մէկ տարի Վրաստան կրնան մնալ առանց վիզայի

Վերջերս, Վրաստանի կառավարութիւնը հրապարակած է ցանկը այն երկիրներուն, որոնց քաղաքացիները կրնան մէկ տարի Վրաստանի տարածք մնալ առանց վիզայի: Այդ երկիրներու շարքին է նաեւ Հայաստանը:

2014-ի ամրան Վրաստանի կառավարութիւնը որոշում ընդունած էր, որ 2014-ի Սեպտեմբեր 1-էն բոլոր արտասահմանցիները՝ անկախ քաղաքացիութենէ, եթէ կը ցանկանան Վրաստան 90 օրէն աւելի մնալ՝ ուսանելու, աշխատելու, գործարարութիւն ծաւալելու կամ ընտանիքին միաւորուելու նպատակով, պէտք է համապատասխան վիզա ստանան տուեալ երկրին մէջ գործող Վրաստանի հիւպատոսական ծառայութիւններէ:

Վրաստանի արտաքին գործոց նախարարութիւնը աւելի ուշ հանդէս եկած էր յայտարարութեամբ, ըստ որուն՝ վիզային ազատ կարգը պիտի շարունակէ գործել Հայաստանի այն քաղաքացիներուն համար միայն, որոնք կարճ ժամանակով եւ զբօսաշրջութեան նպատակով կ'այցելեն Վրաստան:

ԱՊԱԳԱՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ԱԷՏԻՍ ՊԱԳԳԱԼԵԱՆ**

**Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻՄ ՄԱԿԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒԻԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

Canada

Ճեյմս Ուորլիք Չայաստան այցելեց



Չայաստանի Չանրապետության նախագահ Սերժ Սարգսյան 10 Յունիս 2015-ին, ընդունեց ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճեյմս Ուորլիքը:

Չանդիպման ընթացքին քննարկուեցան դարաբաղեան հիմնախնդիրի խաղաղ լուծման բանակցային հոլովոյթի ներկայ հանգրուանին եւ հետագայ քայլերուն վերաբերող հարցեր:

Չանրապետության նախագահը վերահաստատեց Չայաստանի պատրաստակամութիւնը՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն հետ շարունակելու բանակցային խաղաղ ճամբով տագնապին լուծման ուղղուած ջանքերը:

Նոյն օրը, ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճեյմս Ուորլիք ընդունուեցաւ Չայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի կողմէ: Չրուցակիցները հանգամանալից կերպով քննարկեցին ատրպէյճանական-դարաբաղեան տագնապի խաղաղ լուծման ուղղուած բանակցային հոլովոյթին առնչուող հարցեր:

«Չայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպման յստակ թուականը տակաւին յայտնի չէ, բայց մենք պիտի այցելեմք Երկու մայրաքաղաքներ, եւ ատիկա հարցերէն մէկն է, որ պիտի քննարկենք», ըսաւ Ուորլիք՝ հայաստանեան լրատու կայքի մը տուած հարցազրոյցին մէջ:

Պատասխանելով այն հարցումին, թէ՛ յառաջընթաց կա՞յ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանակցային հոլովոյթին մէջ, Ուորլիք ըսաւ, որ հանդիպումներ կ'ունենայ Չայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի եւ նախագահ Սերժ Սարգսյանի հետ: «Մենք կը խօսինք բանակցային հոլովոյթին մէջ հետագայ քայլերու մասին: Երկու նախագահներն ալ յայտարարած են երկխօսութիւնը աշխուժացնելու մտադրութեան մասին, եւ համանախագահները կ'օգնեն անոնց դիւրացնելու այդ քննարկումները», ընդգծեց Ուորլիք:

Յիշեցնենք, որ միջազգային միջնորդներուն վերջին այցելութիւնը շրջան տեղի ունեցաւ այս տարուան Փետրուարին:

Պրիւքսելի մէջ տեղի ունեցաւ Չայաստան – Պելճիք գործարար համաժողով



Չայաստանի բարգաւաճման հիմնադրամի նախաձեռնութեամբ Պրիւքսելի մէջ տեղի ունեցաւ «Չամազործակցութեան կարելիութիւնները Չայաստանի եւ Պելճիքայի միջեւ» գործարար համաժողովը:

Համաժողովին մասնակցեցան 45 պելճիքական ընկերութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Պելճիք – Չայաստան եւ Պրիւքսելի առեւտրական-արդիւնաբերական տունները, Վալոնիոյ արտահանումներու եւ ներդրումներու գործակալութիւնը եւ Ֆլանտրիոյ ներդրում-

ներու եւ առեւտուրի գործակալութիւնը:

«Պելճիքայի գործարարները եւ համապատասխան գործակալութիւնները մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեցին համաժողովին նկատմամբ՝ պայմանաւորուած Եւրասիական տնտեսական միութեան Չայաստանի անդամակցութեամբ, որուն լոյսին տակ անոնք Չայաստանը կը նկատեն իբրեւ կամուրջ՝ դէպի Եւրասիական տնտեսական միութեան շուկայ», ըսուած է հիմնադրամի հաղորդագրութեան մէջ:

Չ.Չ. Նախագահ Սերժ Սարգսյան Ռուսիոյ օրուան առիթով շնորհաւորեց Ռուսիոյ ղեկավարութիւնը

Չայաստանի Չանրապետության նախագահ Սերժ Սարգսյան Ռուսիոյ պետական տօնին՝ Ռուսիոյ օրուան առիթով Ուրբաթ՝ 12 Յունիս 2015-ին, այցելեց Երեւանի մէջ Ռուսիոյ դեսպանատուն եւ շնորհաւորեց դեսպան Իւան Վոլինքինը եւ դեսպանատան աշխատակիցները:

Սարգսյան տօնին առիթով նաեւ շնորհաւորական ուղերձներ յղեց Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի եւ վարչապետ Տմիթրի Մետվետեի:

Փութինի ուղղուած շնորհաւորական ուղերձին մէջ Սերժ Սարգսյան վստահութիւն յայտնեց, որ երկկողմ յարաբերութիւններու զարգացման ուղղուած միացեալ ջանքերը եւ շրջանային համարկման միատրուստներուն՝ հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան, Եւրասիական տնտեսական միութեան եւ ԱՊՀ-ի գծով արդիւնաւետ գործակցութիւնը, ինչպէս նաեւ միջազ-



գային հրատապ հարցերու շուրջ խոր համակարգումը ամբողջովին կը համապատասխանեն երկու երկիրներու եւ քաղաքացիներու արմատական շահերուն:

Ռուսիոյ վարչապետին ուղղուած ուղերձին մէջ Սարգսյան նշեց, որ այսօր հայ-ռուսական ռազմավարական յարաբերութիւնները հետեւողականօրէն կը զարգանան՝ ներառելով փոխշահաւետ համագործակցութեան նոր մարզեր:

Թուրքիոյ քրտամետ կուսակցութիւնը կողմ է Չայաստանի հետ սահմանի բացման եւ Ցեղասպանութեան ճանաչման

Թուրքիոյ ընդդիմադիր քրտամետ «Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութիւնը» (HDP), որ Յունիս 7-ին կայացած խորհրդարանական ընտրութիւններուն 80 պատգամաւորական աթոռ ձեռք բերելով, ներկայացուած է Թուրքիոյ ազգային մեծ ժողովին մէջ (TBMM), հանդէս եկած է հայամետ յայտարարութիւններով:



Ըստ Ermenihaber.am-ի՝ թրքական «Haberazerbaycan.com» լրատուկայքը կը փոխանցէ՝ HDP-ի՝ արտաքին յարաբերութիւններու գծով փոխնախագահ Նազմի Կիւրը յայտարարած է, որ իր կուսակցութիւնը կողմ է Չայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման եւ սահմանի բացման:

Ռուսական «ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ» լրատուական գործակալութեան հարցազրոյց տուած Կիւրը նշած է նաեւ, որ HDP-ն կը ցանկանայ, որպէսզի Չայոյց Ցեղասպանութիւնը ճանչցուի:

«Մենք կողմ ենք, որպէսզի կէսնքի կոչուին Չայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման արձանագրութիւնները եւ սահմանը բացուի: Չայ-թրքական յարաբերութիւնները պէտք չէ դարաբաղեան հիմնախնդիր լուծման հետ կապուած ըլլան: Չայաստանն ու Ատրպէյճանը պէտք է բանակցութիւններու ճանապարհով լուծեն հակամարտութիւնը: Մենք նաեւ կ'ուզենք, որ ճանչցուի Օսմանեան շրջանին հայերու նկատմամբ իրագործուած Ցեղասպանութիւնը», - նշած է Կիւրը:

Չայ եւ այլ նահատակներու յիշատակին ծառատունկ տեղի ունեցած է Չալէպի մէջ

Չալէպի քրիստոնեական թաղամասին մէջ Յունիս 12-ին տեղի ունեցած է ծառատունկ. տնկուած են 30 ծառեր, որոնցմէ 10-ը հայ, 10-ը այլազգի քրիստոնեայ եւ 10-ը իսլամ նահատակներու անունով: Այս մասին «Արմէնփրես»-ի հետ զրոյցի ընթացքին յայտնած է Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի խօսնակ Ժիրայր Ռէյիսեանը՝ աւելցնելով, որ ծառատունկին ներկայ եղած են Չալէպի նահանգապետը, տարբեր կուսակցութիւններու եւ հայ համայնքի ներկայացուցիչներ, Սուրիոյ բնապահպանութեան հայազգի նախարար Նահրա Սարգիսը:



«Մեծ պաստառի վրայ փակցուած են նահատակներուն լուսանկարները եւ 30 թիւը, ծաղիկներ դրուած են նահատակներուն յիշատակին, որմէ ետք տեղի ունեցած է ծառերու տնկման արարողութիւնը», - նշած է Ռէյիսեան՝

Փարիզի մեջ՝ Հայոց Ցեղասպանութան տարելիցին նուիրուած գիտաժողով



Հայաստան-Ֆրանսա բարեկամական խումբի նախագահ Ֆիլիպ Կալտենպախի նախաձեռնութեամբ Փարիզի մեջ կայացած է «Ֆրանսա՝ երկիր, որ ընդունեց Հայոց Ցեղասպանութենէն փրկուած հայերը» խորագիրով գիտաժողով, որուն մասնակցած է քանի մը հարիւր մարդ:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը՝ վկայակոչելով Nouvelles d'Arménie-ն, գիտաժողովին պատմաբան Իվ Թերնոնը ներկայացուցած է պատմական ժամանակաշրջանը ու այն պայմանները, որոնց մեջ գտնուող Ֆրանսան ընդունած է փախստականները:

Վալերի Թորանեանը ներկայացուցած է իր ընտանիքի պատմութիւնը եւ այն սարսափը, որով անցած է իր տատիկը: Ան շեշտած է, որ այդ հայերն ու անոնց սերունդները Ֆրանսան ընդունած են որպէս երկրորդ տուն եւ նպաստած ինչպէս Ֆրանսայի կայացման, այնպէս ալ հայ-ֆրանսական յարաբերութիւններու զարգացման:

Ծերակոյտի Հայաստան-Ֆրանսա բարեկամութեան խումբի փոխնախագահ Եսթեր Պենպասան ալ պատմած է Իսթանպուլի մեջ անցուցած իր մանկութեան մասին:

Իսթանպուլի մեջ յունական եկեղեցւոյ վրայ յարձակում



Իսթանպուլի Քատըքոյ շրջանին մեջ գտնուող Սուրբ Երրորդութիւն յոյն ուղղափառ եկեղեցւոյ վրայ յարձակում կատարուած է: Յոյն ուղղափառ համայնքի եկեղեցական դպրոցներու եւ գերեզմանոցի հիմնադրամի ղեկավար փրոֆեսոր Եորկո Իսթեֆանոպոլուսը հայկական «Ակօս» շաբաթաթերթին յայտնած է, որ բողոք ներկայացուցած են յարձակում իրականացուցած անձին դէմ, կը գրէ ermenihaber.am-ը:

Մանրամասնութիւններ ներկայացնելով յարձակման մասին՝ Իսթեֆանոպոլուսը յայտնած է, որ յարձակում իրականացնող անձը, «Ալլաի աքպար» գոռալով, ձեռքի վառելիքը լեցուցած է եկեղեցւոյ դուռին վրայ եւ այրած: Յարձակողը բռնած են եկեղեցւոյ դիմաց գտնուող մարդիկ: Իսթեֆանոպոլուսը տեղեկացուցած է, որ ակնաւորներու պատմածներուն համաձայն, եղած է եւս մէկ անձ, որ կը սպասէր յարձակողին:

Յոյն համայնքի ներկայացուցիչը այս հարցով քննադատութեան են-

թարկած է քաղաքական գործիչները: Համայնքի ներկայացուցիչը նշած է, որ հասարակութեան մեջ պէտք է խթանուի փոքրամասնութիւններու՝ հաւասար քաղաքացիութիւն ունենալու գիտակցութիւնը, եւ այս հարցով մեծ պատասխանատուութիւն կը կրեն քաղաքական գործիչները:

«Երբ երկրին վարչապետը (նկատի ունի ներկայիս նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողանը) հեռուստաթերթով «կը ներքէ արտայայտութեանս համար՝ հայ, կը ներքէ՛ յոյն» խօսքեր կը հնչեցնէ, ի հարկէ ժողովուրդն ալ այսպէս պիտի մտածէ:

Քըրքչուարօղլուն ալ (գլխաւոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցութեան ղեկավար) դատի կու տայ իրեն հայ անւանողները՝ վերջիններուն խօսքերը որակելով «կեղտոտ գրպարտանք»: Քաղաքական կուսակցութեան անդամները մեծ պատասխանատուութիւն կը կրեն», - շեշտած է Իսթեֆանոպոլուսը:

Լ. Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութիւնը վստահութեան քուէ ստացաւ

ԼՂՀ կառավարութիւնը, ղեկավարուելով Սահմանադրութեան 89-րդ յօդուածի դրոյթներով, սահմանուած ժամկետի մեջ ԼՂՀ Ազգային ժողով ներկայացուցած էր կառավարութեան 2015-2017 թուականներու գործունեութեան ծրագիրը՝ միաժամանակ ղեկելով իր վստահութեան հարցը:

ԼՂՀ Ազգային ժողովի մամլոյ ծառայութեան փոխանցմամբ՝ ծրագրի քննարկումը խորհրդարանի Յունիս 10-ի նիստին աւարտած է ժամը 12:50-ին:

Հիմք ընդունելով այն փաստը, որ մինչեւ Յունիս 11-ի ժամը 12:50, այսինքն՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրէնքի 101 եւ 102 յօդուածներուն համաձայն, 24 ժամուան ընթացքին, չէ ներկայացուած կառավարութեան անվստահութիւն յայտնելու մասին որոշման նախագիծ՝ կառավարութեան գործունեութեան ծրագիրը կը համարուի հաւանութեան արժանացած:

Պաքու պիտի փակէ ԵԱՀԿ-ի գրասենեակը

Ատրպէյճանական «Թուրան» լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ Եւրոպայի ապահովութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Պաքուի ներկայացուցչութիւնը պիտի փակուի: Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը Յունիս 3-ին նամակ մը ուղարկած էր (ԵԱՀԿ) Վիեննայի կեդրոնական գրասենեակ՝ նշելով, որ կառավարութիւնը այսուհետեւ անհրաժեշտ չի նկատեր (ԵԱՀԿ) ծրագիրներու համակարգողի գործունեութիւնը եւ Յունիս 4-էն սկսեալ չեղեալ պիտի նկատէ Սեպտեմբեր 24, 2014-ին ստորագրուած եւ համակարգողի գործունեութիւնը սահմանող փոխըմբռնման յուշագիրը:




խնդիրները», ըսուած է նամակին մեջ:

Յունիս 5-ին, (ԵԱՀԿ) գլխաւոր քարտուղար Լամպերթօ Չանիեր կառոյցի անդամ պետութիւններուն տեղեկացուցած է Ատրպէյճանի որոշումին մասին:

«Ատրպէյճանի կառավարութիւնը (ԵԱՀԿ) ին մէկ ամիս ժամանակ կու տայ լուծելու այս իրավիճակէն բխող

Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ ժամկետային զինծառայողներու ծնողները այցելած են Արցախ

Երեւանի քաղաքապետարանի ընկերային ապահովութեան վարչութեան պետ Ռուզաննա Չաքարեանի գլխաւորած պատուիրակութիւնը մեկնած է Ստեփանակերտ:



Ստեփանակերտի քաղաքապետարանի պաշտօնական կայքէջի փոխանցմամբ՝ մօտ 250 ժամկետային զինծառայողներու ծնողներն ու հարազատները դիմաւորուած են Ստեփանակերտի փոխքաղաքապետեր Սուրբէն Թամրազեանի, Արմէն Յակոբեանի եւ Պաշտպանութեան բանակի հրամանատարի տեղակալ, զօրավար-գնդապետ Վարդան Բալայեանի, սպարապետ Վազգէն Սարգսեանի անունը կրող կեդրոնական ենթակայութեան զօրամասի բարձրաստիճան սպաներու կողմէ:

Ներկաները ծաղիկներ տեղադրած են սպարապետի յուշարձանին, որմէ ետք կեդրոնական պաշտպանական շրջանի ակումբին մեջ, Ստեփանակերտի մշակոյթի տան գեղարուեստական խումբերու ուժերով կազմակերպուած են համերգ եւ մշակութային այլ ձեռնարկներ: Կազմակերպիչներուն իրենց շնորհակալութիւնը յայտնած են թէ՛ Երեւանի քաղաքապետարանի պատուիրակները, թէ՛ ծնողները եւ թէ՛ զօրամասի սպայական կազմը:

Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչները վստահեցուցած են, որ նման ձեռնարկները պիտի ըլլան շարունակական:

Նշենք, թէ արդէն երրորդ տարին է, որ Երեւանի եւ Ստեփանակերտի քաղաքապետարաններու միջեւ՝ բարեկամութեան մասին համաձայնագրի ծիրէն ներս, Երեւանի քաղաքապետարանը կը նախաձեռնէ ծնողներու այցելութիւն եւ տեսակցութիւն զինծառայողներու հետ:

Մտայղացումը Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանինն է, որ նպատակ ունի յիշեալ ձեռնարկումներով ամրապնդել բանակ-հասարակութիւն կապը, ինչպէս նաեւ ծնողներու վստահութիւնը՝ զինծառայող զաւակներու նկատմամբ:

ԿՈՄԻՏԱՍԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊԱՆԾԱԼԻ ՅԱՄԵՐԳ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵԶ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱԼ

Հայ ժողովուրդի հանճարեղ զաւակներէն, հայ ազգային երաժշտութեան ու երգարուեստի աշխարհահռչակ հիմնադիր Կոմիտաս Վարդապետի մահուան 80-րդ տարելիցին նուիրուած համերգը որ ձօնուած էր Հայոց Տեղասպանութեան 100-ամեակին, տեղի ունեցաւ 7 Յունիս 2015 Կիրակի երեկոյ, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կամարներուն ներքեւ, հովանաւորութեամբ Գանատահայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Ս. Եպս. Յովակիմեանի, կազմակերպութեամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Կատարողական Արուեստներու Գանատահայ Ընկերակցութեան (CAAPA) ի կողմէ:

Եկեղեցին լեցնող երաժշտասերներու ընտրանի հասարակութիւն մը:

Կազմակերպութիւններու անուով Ատենապետուհի՝ Լեւա Ուզունեանի ողջոյնի խօսքերէն ետք, հանդէս եկաւ Տօթթ. Արաքսի Ալթունեան, որ Կոմիտասի կեանքի ու հանճարի մասին ընդարձակ տեղեկութիւններ փոխանցեց, պատահաբար վրայ ցոյց տալով իր կեանքէն ու գործունէութիւններէն զանազան դրուագներ:

Այս ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին Լարային Քառեակը որ կը բաղկանար Գայիանէ Բարադամեան (ջութակ), Սօնա Գալթակեան (ջութակ), Էլիզապեթ Մորրիս (ջութակ) եւ Գայիանէ Սահակեան (թաւջութակ) որոնք զգայուն նուագածութեամբ հնչեցուցին Կոմիտասի ստեղծագործութիւններէն կտորներ, «Շողեր քան» վերամշակում Ասլամագեանի, «Չինար ես»,



Լուսանկարներ: Յարութիւն Արճակեան

կերանար իրեն: Ան յաջորդաբար ներկաներուն հրամցուց Կոմիտասի սիրուած ժողովրդական երգերէն «Անտունի», «Ախ Մարալ քան- Երևում եմ», «Ո՛հ ինչ քաղցր բան» եւ «Ձայն տուր ով ծովակ» կտորները: Լին Անոյ Հշնար իր բացառիկ ծայնով ու իր անսայթաք մեկնաբանութիւններով ինչպէս միշտ այս անգամ եւս հմայեց ներկաները եւ ողջունուեցաւ ջերմ ծափերով:

Միջնարարէն ետք Տօթթ. Ալթունեան հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց երկրորդ մասին մէջ ներկայացուցիչ կտորներու մասին: Այս ջութակահար Գայիանէ Բարադամեան մեկնաբանեց Ս. Գրիգոր Նարեկացիի «Հաւուն-հաւուն» կտորը: Լարային Քառեակի կողմէ ունկնդրուեցաւ հայ երաժշտութեան հայր, վերստեղծիչ Կոմիտասի Ս. Պատարագէն հոգեւոր եւ կրօնաշունչ երկու շարականներ «Սուրբ Սուրբ» եւ «Օրհնեալ է Աստուած»:

Յաջորդաբար Կոմիտասի «Կռունկ»-ը մշակուած Ասլամագեանի, «Տըլէ Եաման»-ը որ վասպուրական ապրող գիւղացի հայ մարդու մը տագնապը կը պատմէ եւ «Ծիրանի ծառ» կտորները որոնք զուգանուագով մեկնաբանուեցան քառեակի ար-

ւեստագետներուն կողմէ արժանացան ներկաներու բարձր գնահատանքին:

Լին անոյ Հշնար այս անգամ կը ներկայանար հայ երգարուեստի սիրուած ժողովրդական երգերով, Բարսեղ Կանաչեանի «օրօր», «Ավարդի երազը» եւ Համբարձում Պերպերեանի «Անոր» կտորները, զանոնք խիստ յաջող կերպով մեկնաբանեց հնչեցնելով անմահ երաժիշտներու յորինումները ստանալով երկարատեւ ծափահարութիւններ, իրեն դաշնակով կ'ընկերակցէր Թինա Կարապետեան:

Լարային քառեակը կրկին հանդէս եկաւ անմահ Կոմիտասի ստեղծագործական մշակումներէն սիրուած կտորներ ներկայացնելով: Քառեակի անդամները նախ մեկնաբանեցին «Հաբրբան», յաջորդաբար «Կաբալիկ», «Գարուն ա», «Վաղարշապատի պար»-ը եւ որպէս պիտի կտոր «Հայրապետական մաղթեր»:

Համերգի ավարտին բոլոր արւեստագետները արժանացան երկարատեւ ծափահարութիւններու եւ ստացան գեղեցիկ ծաղկեփունջեր: Աբգար Սրբազանի հուսկ բանքով ու աղօթքով իր ավարտին հասաւ յիշատակելի այս երեկոն:



Լին Անոյ Հշնար



Տօթթ. Արաքսի Ալթունեան

Համերգին ներկայ էին Առաջնորդ Աբգար Սրբազան, Ռումանիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթև Ս. Եպս. Յակոբեան, որ օրհնաբեր այցելութեամբ քաղաքս կը գտնուէր, առաւօտուն Սրբազան պատարագ մատուցանեց Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ, ինչպէս նաեւ Գերշ. Հայր Եղիա Ծ. Վրդ. Զիրեջեան, Արժ. Տ. Չարեհ Ա. Զինյ. Չարգարեան եւ

«Զելէ-քելէ», «Հոյ Նազան», «Երկինքն ամպել է» եւ «Ալ ալուղս» կտորները որոնք արժանացան ջերմ գնահատանքի:

Այնուհետեւ բեմ բարձրացաւ սոփրանօ Լին Անոյ Հշնար, որուն ներկայութիւնը վերջերս յաճախ կը վայելէր զանազան բեմերու վրայ, դաշնակի ընկերակցութեամբ Թինա Կարապետեանի որ տիրաբար կ'ըն-

Պաշար Ասատ կարելոր կը համարէ հայ համայնքի դերը երկրի պետական կեանքին մէջ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ խոստացած է, որ Սուրիան մօտ ապագային պիտի համալրէ Հայոց Տեղասպանութիւնը ճանչցած երկիրներու շարքը: Ասատը այս մասին յայտնած է Յունիս 1-5 աշխատանքային այցով Սուրիա մեկնած հայ պատգամաւորներուն հետ հանդիպման ժամանակ:

«Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ Ազգային ժողովին մէջ Սուրիոյ նախագահին հետ հանդիպման արդիւնքները ներկայացուցած է ՀՀ ԱԺ Հայաստան-Սուրիա խորհրդարանական բարեկամութեան խումբի ղեկավար Տաճատ Վարդապետեանը: Ան յայտնած է, որ Սուրիոյ մէջ իրենք հանդիպումներ եւ քննարկումներ ունեցած են Սուրիոյ խորհրդարանի այն յանձնաժողովներու ղեկավարներուն հետ, որոնք քննարկած եւ դատապարտած էին Հայոց Տեղասպանութիւնը:

«Մենք մեր հանդիպումներում յոյս յայտնեցինք, որ Սիրիայի խորհրդարանում այս գործընթացը կ'ունենայ շարունակական բնոյթ եւ կը հասնի իր տրամաբանական ավարտին: Նախագահ Ասատի հետ հանդիպման ժամանակ եւս այդ հարցը քննարկուեց, եւ նա նշեց, որ մօտ ապագայում Սիրիան անպայման համալրելու է այն երկրների ցանկը, որոնք ճանաչել եւ դատապարտել են Հայոց Տեղասպանութիւնը», - ըսած է Վարդապետեանը:

Պատգամաւորը նշած է, որ հայ պատգամաւորներուն այցին հիմնական նպատակը Սուրիոյ մէջ ապրող հայերու խնդիրներուն ծանօթանալը եւ անոնց լուծման ուղիներու որոնումը եղած է: «Մեր հանդիպումները Սուրիայի մայրաքաղաք Դամասկոսում անցել են ամենաբարձր մակարդակով: Մեզ ընդունեց Սիրիայի Հանրապետութեան նախագահը, եւ կարող եմ ասել, որ նրա վերաբերմունքը հայ ժողովրդի, Սիրիայի հայ համայնքի հանդէպ միայն յարգանքի է արժանի», - նշած է պատգամաւորը:

Ան յայտնած է, որ Սուրիոյ նախագահը կարելոր համարած է հայ հա-



մայնքի դերը երկրի պետական կեանքին մէջ: Իսկ Սուրիոյ խորհրդարանի խօսնակը աննախադէպ համարած է Երեւանի մէջ Հայոց Տեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկները: «Սիրիայի վարչապետի եւ արտգործնախարարի հետ հանդիպումը եւս անցաւ փոխըմբռնման մթնոլորտում: Միայն վարչապետն ափսոսանք յայտնեց, որ Հայաստանի եւ Սիրիայի միջեւ կնքուած 57 պայմանագրերն արդիւնաւետ չեն գործում՝ ելնելով այն իրողութիւնից, որի մէջ գտնուում է Սիրիան», - ըսած է Վարդապետեանը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՅԽ Գործադիր Կոմիտեի Նիստի Մասնակիցներին

Յունիսի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընթացող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՅԽ) Գործադիր կոմիտեի նիստի անդամներին: Ժողովականների անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսն ողջունեց եւ բարեմաղթանքներ փոխանցեց ԵՅԽ Կեդրոնական կոմիտեի փոխհամադրող Սասիմայի մեթրոփոլիթ Կենսատիոսը (Կոստանդնուպոլիսի Տիեզերական Պատրիարքութիւն)՝ շնորհակալութիւն յայտնելով Մայր Աթոռում ցուցաբերուած ջերմ հիւրընկալութեան համար:



Այնուհետեւ ժողովականներին ողջունեց եւ իր հայրապետական օրհնութիւնը բերեց Նորից Սրբութիւնը՝ կարեւորելով այն, որ հայ ժողովրդի համար Նուիրական այս տարում, երբ համայն հայութիւնը ոգեկոչում է Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, ԵՅԽ Գործադիր կոմիտեն իր հերթական ժողովն անցկացնում է համայն հայութեան հոգեւոր կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գարեգին Բ. Կաթողիկոսը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կողմից Հայոց Եկեղեցուն եւ հայ ժողովրդին ցուցաբերուող մեծ գորակցութիւն որակեց այս իրադարձութիւնը՝ յատկապէս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման առումով: Իր խօսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ներկայացնելով միջեկեղեցական ոլորտում Հայ Եկեղեցու եւ Քրիստոսեկեղեցիների միջեւ ձեւաւորուած արդիւնաւետ յարաբերութիւնները փաստեց, որ այդ համագործակցութիւնը միտուած է Եկեղեցիների միջեւ եղբայրական կապերի զօրացմանն ու աւելի ջերմացմանը: Այս առնչութեամբ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակութեամբ ընդգծեց նաեւ, որ միայն Եկեղեցիների եւ միջեկեղեցական կառույցների համատեղ ջանքերի արդիւնքում, հնարաւոր կը լինի ապահովել աւելի լաւ ու արդար աշխարհ՝ գերծամէն տեսակի ոճրագործութիւնից եւ մարդկային կեանքի դեմ ուղղուած ցանկացած դատապարտելի ոտնձգութիւնից: Ի պատասխան հարցերի, Նորին Սրբութիւնը պատմական ակնարկով ժողովականներին ներկայացրեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անցած դժուարին ուղին, անդրադարձաւ Մեծ Եղեռնի տարիներին կրած մեծ կորուստներին, խօսեց Հայ Եկեղեցու առաքելութեան, առկայ մարտահրաւերների ու յատկապէս Եկեղեցաշինութեան, հոգեւոր-մշակութային, կրթական եւ սոցիալական ոլորտներում Հայ Եկեղեցու գործունեութեան մասին:

Վերջում Վեհափառ Հայրապետն արդիւնաշատ ու բեղուն աշխատանք մաղթեց ժողովականներին: Հանդիպմանը ներկայ էր Մայր Աթոռի Միջեկեղեցական յարաբերութիւնների պատասխանատու Գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանը:

Չինուորական գործակցութիւն՝ Թուրքիոյ եւ Քաթարի միջեւ

Անգարա յայտարարեց, որ թուրք-քաթարական զինուորական գործակցութեան համաձայնութեան Թուրքիոյ պետական պաշտօնաթերթին մէջ լոյս տեսնելէն ետք թրքական կողմէն ուժի մէջ մտած է:

Համաձայնութեան հիմամբ երկու երկիրներուն միջեւ համագործակցութիւնը կը վերաբերի զինուորական մարզումին, զինուորական արդիւնաբերութեան եւ թրքական զինեալ ուժերու քաթարական հողերու վրայ տեղակայման:

Երկու կողմերուն միջեւ զինուորական մարզումի, զինուորական արդիւնաբերութեան, միացեալ ռազմափորձերուն եւ երկու երկիրներուն մէջ զինեալ ուժերու փոխադարձ տեղակայման վերաբերեալ համագործակցութեան ամրապնդման համար մեխանիզմ մը պիտի ստեղծուի:

Համաձայնութեան հիմամբ, հիւրընկալ երկիրը երկրորդ երկրին կ'արտօնէ օգտագործել իր նաւահանգիստները, օդակայանները, օդային տարածքները, իր զինուորական ուժերը տեղակայել հիւրընկալ երկրին հողերուն վրայ, օգտագործել վերջինիս ճամբարները, զինուորական կեդրոններն ու զօրաբաժինները:

Անին պիտի վերանորոգուի

Յունիս 5-25, Երեւանի «Արամ» պատկերասրահի «Մաշտոց» մասնաճիւղին մէջ տեղի պիտի ունենայ ֆրանսահայ աշխարհահռչակ գեղանկարիչ Ժանսեմի (Յովհաննէս Սեմերճեան) ստեղծագործութիւններու ցուցահանդէսը: Պիտի ներկայացուին 45 գեղանկարներ (12 իւղաներկ կտաւ, 13 գծագրեալ եւ 20 վիմա գրութիւն): Այս մասին ըստ «NEWS.am»-ի՝ յայտնած է «Արամ» պատկերասրահի տնօրէն Արամ Սարգսեան: Այս ցուցահանդէսի նախապատրաստումը երկարատեւ աշխատանքի արդիւնք է: Ցուցադրուող գործերու մէկ մասը պատկերասրահը տարբեր ժամանակներու մէջ ձեռք բերած է Ժանսեմի ընտանիքէն, որոշ մասը՝ երրորդական տարբեր աճուրդներէ, շարք մը գործեր ալ ժամանակաւորապէս ներգրաւուած են մասնաւոր հաւաքածոներէ՝ ցուցադրութեան համար: Նկարներու մեծ մասը հայ արուեստասէր հասարակութեան պիտի ներկայացուի առաջին անգամ: Ատոնք որոշակի պատկերացում կու տան Ժանսեմի անցած ստեղծագործական ուղիի տարբեր փուլերու եւ իւրայատկութիւններու մասին Լոնտոնի Ռիկմոր սրահին մէջ Յունիս 12-ին պիտի կայանայ «Ալեքսանտր Զառուշեան եւ ընկերներ» խորագիրով կամերային համերգ՝ Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին: Այս մասին կը հաղորդէ «panorama.am»-ը: Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նուագախումբին տեղեկութիւններով՝ համերգի ընթացքին ելոյթ պիտի ունենան ջութակահարներ Լեւոն Զիլինկիրեանը, Սերգէյ Խաչատրեանը, ալտահար Զիմ Զաչբաշեանը, թաւջութակահարներ Ալեքսանտր Զառուշեանը, Սթիւըն Իւերլիսը, դաշնակահարներ Սերգէյ Բաբայեանը, Լուսինէ Խաչատրեանը, Վահան Մարտիրոսեանը, Եւգենի Սուտպինը: Ծրագիրին մէջ ընդգրկուած պիտի ըլլան Սողոմոն Կոմիտաս, Ալեքսանտր Յարութիւնեան, Առնօ Պապաճանեան, Ռոպերթ Շուման: Թուրքիոյ մշակույթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնը հաստատած է Կարսի պաշտ-



պանութեան խորհուրդին կողմէ Անիի աւերակներու շրջապատի մաքրութեան եւ վերանորոգութեան համար 2013-ին պատրաստուած ծրագիրը: Այս մասին կը հաղորդէ Պոլսոյ «Մարմարա»-ն՝ վկայակոչելով «Աքշամ»-ի աշխատակից Ելտա Կեօթտաղի Անգարայէն հաղորդած տեղեկութիւնները: Թերթը կը յիշեցնէ, որ Անիի Աւերակներու շրջանը ծանօթ է որպէս «Քառասուն դռներով քաղաք» կամ «1001 եկեղեցիներու քաղաք»: ԻԻՆԵՍՔՕ վերջերս Անին ընդունած էր Համաշխարհային ժառանգութիւններու

առժամայ ցանկին մէջ: Մշակույթի նախարարութիւնը նպատակ ունի վերանորոգելու շրջանը, ապահովելու համար որ Անին 2016 թուականին ընդունուի ԻԻՆԵՍՔՕ-ի մասնաւոր ցանկին մէջ: Վերանորոգութեան աշխատանքին համար պիտի հրաւիրուին զանազան մասնագետներ, իսկ Մայր Եկեղեցիին Նորոգութեան համար պիտի հրաւիրուին նաեւ Հայաստանէն մասնագետներ: «Աքշամ» այս լուրը կը հաղորդէ «Քառասուն դռներով քաղաքը Կը Բանայ Իր Դռները» խորագիրին ներքեւ:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 22 JUIN 2015

The Guardian : les dirigeants européens devraient boycotter les mini-olympiades de l'Azerbaïdjan



Jules Boykoff, journaliste au quotidien britannique The Guardian, a écrit : « L'Azerbaïdjan se prépare à accueillir les premiers Jeux européens, avec en toile de fond la répression.

A partir du 12 juin, Bakou accueillera les mini-Jeux Olympiques pour les athlètes de haut niveau des 50 pays membres des Comités olympiques européens. En sélectionnant l'Azerbaïdjan - un état qui écrase ouvertement les idées dissidentes et censure les journalistes - les responsables du sport européen ont amplifié les pires éléments du Mouvement olympique : prix élevé, gigantisme, censure, et répression politique. Ce faisant, ils donnent au président autocratique d'Azerbaïdjan, Ilham Aliev, précisément ce dont il a envie, une publicité favorable sur la scène mondiale.

Le duo père-fils Heydar et Ilham Aliev gouvernent l'Azerbaïdjan depuis 1993. Peu de temps après la chute de l'Union soviétique en 1991, Heydar Aliev a consolidé le pouvoir, la supervision de la « phase sanglante » de son affrontement avec l'Arménie au sujet du Haut-Karabagh, et face à des allégations de corruption politique et le bourrage des urnes. Nommé par Brejnev, le père a remis la présidence à son fils Ilham Aliev en 2003. Bakou 2015 est signe d'opulence et de faste, mais derrière, le canevas n'est pas joli. La répression politique est ciblée et endémique. Alors que les préparatifs des jeux avancent, environ 80 prisonniers politiques croupissent dans les prisons azerbaïdjanaises. Beaucoup d'autres militants des droits humains, et des journalistes sont victimes de harcèlement, d'interdictions de voyager et de menaces.

L'équipe de Grande Bretagne envoie à Bakou sa plus importante délégation d'athlètes depuis les Jeux Olympiques d'été de 2008 à Beijing, sous la direction de Simon Clegg. Clegg est l'ancien chef de l'Association olympique britannique qui a monté en puissance la propagande pro-Azerbaïdjan en tant que chef du comité organisateur de Bakou 2015. Il est l'incarnation de la maxime de Upton Sinclair « Il est difficile de trouver un homme qui comprend quelque chose, lorsque son salaire dépend de son incompréhension. »

Les dirigeants européens sont disposés à tolérer l'intolérance d'Aliev. Mais il est pas trop tard pour prendre une position de principe. Les gouvernements européens devraient envoyer un message en boycottant les Jeux européens. Cela priverait Aliev de ses sourires, la mouture d'or de la tyrannie. Assez de gestes obséquieux. La répression à Bakou tranche avec l'esprit de la charte olympique. Il n'est plus temps de faire de la morale sélective. »

L'Azerbaïdjan ferme le bureau de l'OSCE à Bakou

Bakou veut officiellement resserrer davantage ses relations avec l'Occident et considère fermer le Bureau du Coordonnateur de l'OSCE à Bakou. Selon des sources diplomatiques bien informées, une lettre du ministère des Affaires étrangères de l'Azerbaïdjan a été envoyée le 3 juin au siège de l'OSCE à Vienne.

« Le gouvernement de l'Azerbaïdjan a signalé qu'il n'a plus besoin des activités du Coordonnateur des projets de l'OSCE à Bakou. Par conséquent, le gouvernement de l'Azerbaïdjan considère qu'à partir du 4 juin 2015, le mémorandum d'accord entre le Gouvernement de l'Azerbaïdjan et l'OSCE signé à Bakou le 24 septembre 2014 est nul. Le gouvernement donne un mois à l'OSCE pour compléter les questions techniques qui se posent dans une telle situation. »

Le 5 juin, le Secrétaire général de l'OSCE Lamberto Zannier a informé les États membres de l'OSCE de la décision officielle de Bakou.



Regarder les élections turques

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 4 juin 2015

Les élections législatives en Turquie le 7 juin sont étroitement suivies par toutes les parties touchées dans la région, d'une manière ou l'autre, par leurs résultats. La Turquie est une superpuissance régionale arrogante, sous la présidence de Recep Tayyip Erdogan. Elle dispose de son influence et d'une opinion sur de nombreux conflits dans la région. Elle a des tentacules dans les Balkans, elle est directement impliquée dans les conflits qui font rage en Syrie, en Irak et en Libye, et elle prend même en charge les troubles des musulmans ouïghours en Chine. Mais surtout, elle impose un blocus à l'Arménie et donne le ton au bellicisme du président azéri Ilham Aliev.

Par conséquent, les élections ne devraient causer aucun changement national, qui puissent influencer sur la politique étrangère de la Turquie et sa capacité à se mêler des affaires internes de ses voisins.

Lors de la dernière élection, le Président Erdogan a recueilli 52% des votes populaires. Mais l'économie affaiblie de la Turquie, les scandales de corruption endémique, et les instincts dictatoriaux du président ont érodé l'influence du parti AKP de M. Erdogan, qui est au pouvoir depuis les 13 dernières années.

Un récent scandale pourrait détériorer la situation du parti au pouvoir. La Turquie a été accusée de soutenir l'EI en leur fournissant des armes, tandis que son principal partenaire, l'OTAN a bombardé des cibles de l'EI pour amener ce dernier à réduire ses guerres barbares menées en Syrie et en Irak. Tout au long, le gouvernement Erdogan a été en mode de déni. Mais, un dénonciateur sous le nom de Can Dundar a exposé, dans le quotidien Cumhuriyet, le fonctionnement de l'agence des services secrets de la Turquie, la MIT. La police a arrêté des camions transportant des armes destinées aux insurgés syriens, sous le couvert de l'envoi de caisses de médicaments et de nourriture. Deux mille camions ont traversé la frontière entre la Turquie et la Syrie. Le Premier ministre, Ahmet Davutoglu, a affirmé que le contenu de ces camions n'est l'affaire de personne. M. Erdogan a poursuivi Dundar comme traître, et M. Dundar s'est plaint que le pouvoir judiciaire punissait le dénonciateur plutôt que le coupable.

Les sondages prédisent un succès de 46-47% pour l'AKP, ce qui permettrait à Erdogan de demeurer au pouvoir, mais d'autres parties peuvent être en mesure de lui couper les ailes politiques. Le plan de M. Erdogan est de réformer la constitution et de placer tous les pouvoirs exécutifs dans le bureau du président afin de gouverner le pays tel un sultan d'autrefois.

Mais le scénario politique est plus

compliquée que cela, et il dépend de la perspicacité du président pour naviguer dans ce labyrinthe et atteindre ses objectifs.

La constitution actuelle a été rédigée en 1980, à la suite d'un coup d'Etat, par le dictateur militaire Kenan Evren, symbole du mal incarné, qui est décédé récemment à l'âge de 97 ans.

La nécessité de changer la constitution n'est pas discutée par les parties, il s'agit plutôt de savoir quelle forme aura cette nouvelle Constitution. Trois partis sont en lice pour le pouvoir.

Le parti CHP (Cumhuriyet Halk Partisi), issu du début de la république moderne turque, a été fondée par Atatürk lui-même, a dirigé la Turquie durant plusieurs décennies en vertu de lois draconiennes. Le parti est laïque et nationaliste. Au cours des dernières années, ses politiques laïques ont souffert des relations d'Erdogan avec l'armée, qui s'est donné le rôle de protecteur de la constitution, et la plupart des réformes engagées par Atatürk ont été gommées par l'AKP islamiste, comme lorsque la femme du président est apparue avec un foulard sur la tête, interdit par Atatürk. Le CHP joue le rôle de principal parti de l'opposition dirigé par Kemal Kilicdaroglu. Il tient à l'intégrité territoriale du pays, mais a une approche prudente quant au séparatisme kurde.

Le MHP (Milli Haraket Partisi), autre parti d'opposition, est dirigé par Devlet Bahçeli. C'est un parti raciste, farouchement opposé aux aspirations de la minorité kurde. Lors de l'élection présidentielle de 2014, ces deux dernières partis avaient uni leurs forces pour soutenir la candidature malheureuse de M. Ekmeleddin Ihsanoglu.

Le parti le plus controversé de l'opposition est le HDP (Halk Demokratik Partisi) dirigé par Salaheddin Demirtas, un politicien de sang-froid qui prétend que tout citoyen peut se joindre à son parti, Alevi, Laz, Juif, Grec, Arménien, Turc, mais le parti est principalement composé de Kurdes. Demirtas est le principal interlocuteur de l'Etat dans les négociations en cours sur la question kurde, mais il y a un autre groupe kurde moins important appelé Union des communautés kurdes.

Le HDP nie toute association avec le PKK désigné comme une organisation terroriste par le gouvernement turc.

Bien que le gouvernement négocie avec le chef emprisonné du PKK, Abdullah Öcalan, il accuse le HDP de collusion avec le PKK. Demirtas a froidement rétorqué que si son parti a une influence sur le PKK, cela devrait être considéré comme un plus, et non pas un problème politique.

La question importante est de savoir si le HDP pro-kurde ou le Parti démocratique populaire auront ou non des élus au parlement. Le parti doit obtenir plus de 10% des voix. À ce stade, les sondages indiquent de 9,5 à

Suite à la page 8

La Turquie est le principal soutien des gangs terroristes en Syrie

Par Samer R. Zoughaib

L'arrestation de plusieurs magistrats et militaires turcs, accusés d'avoir intercepté une cargaison d'armes à destination des extrémistes en Syrie, fait la lumière sur le soutien apporté par la Turquie aux groupes terroristes et sur son rôle dans la poursuite de la guerre en Syrie. La Turquie constitue le principal pays par lequel transitent les milliers de terroristes venus du monde entier, et qui vont grossir les rangs d'«Al-Qaïda», de l'organisation «Etat islamique» et des autres groupes extrémistes. Le nombre de terroristes qui seraient passés par la Turquie pour se rendre en Syrie ou en Irak s'élèverait, selon des sources de sécurité, à plus de vingt-cinq mille. Même la presse occidentale, citant des sources des renseignements européens et américains, met en exergue le rôle de la Turquie.



Malgré ces faits Ankara s'obstine à nier, souvent avec véhémence, les agissements qui lui sont attribués. Mais après une affaire de saisie d'armes qui défraie la chronique en Turquie, il n'y a plus de place pour le doute.

En effet, début mai, un tribunal turc a ordonné l'arrestation de quatre procureurs et d'un officier de l'armée dans cette affaire de saisie de livraison d'armes à destination de la Syrie l'an dernier.

Les quatre procureurs avaient d'abord été mutés puis suspendus après avoir ordonné la fouille de plusieurs camions et bus dans les provinces d'Adana et Hatay, frontalières de la Syrie, en janvier 2014, parce qu'ils les suspectaient de contrebande de munitions et armes à destination de la Syrie. Il est apparu ensuite que les camions saisis étaient en réalité des véhicules de l'Agence de renseignements nationale (MIT) livrant des armes aux extrémistes syriens.

Embarrassé, le gouvernement turc a imposé un silence médiatique, y compris sur Facebook et Twitter, interdisant la publication des documents concernant l'affaire de la saisie d'armes.

La police a placé en garde à vue deux des procureurs, Souleiman Bagriyanik et Ozcan Sisman, dans leurs résidences d'Antalya et Adana.

Les deux autres magistrats s'appellent Aziz Takci et Ahmet Karaca. «Nous venons de vivre une nuit qui a vu la loi bafouée et l'ordre des choses renversé», a déclaré M. Bagriyanik, ancien procureur général d'Adana, alors qu'il était détenu par la police. «Je suis détenu maintenant uniquement parce que je n'ai pas suivi les menaces et l'ordre de M. le ministre: 'Ne fouillez pas les camions', et n'ai pas empêché mes collègues de le faire. Que puis-je dire de plus?», a-t-il poursuivi. «Les lois sont là. C'est mon travail de faire appliquer les lois».

Les services de sécurité ont également arrêté le colonel Ozkan Cokay, parce qu'il était le plus haut gradé dans la région au moment de la saisie des camions de contrebande d'armes. Le 17 mai, nouveau rebondissement. Sept militaires sont inculpés et placés en détention provisoire.

Début avril, dix-sept militaires avaient déjà été écroués dans le cadre de la même affaire. Ils avaient été inculpés de «complot contre le gouvernement» uniquement pour avoir arrêté et fouillé les fameux camions du service de renseignement turc.

Au total, 55 personnes, des magistrats, des soldats et des policiers, ont été arrêtés dans le cadre de ce scandale, uniquement parce qu'ils étaient en train de faire leur devoir.

A travers ces agissements, le gouvernement turc se rend coupable de la violation de la résolution 2199 du Conseil de sécurité et des résolutions précédentes, interdisant tout soutien, y compris financier, à «al-Nosra» et «Daech», qui sont nommément cités.

Le moment n'est-il pas venu de demander des comptes à Recep Tayyeb Erdogan et à son gouvernement?

L'arméno-argentin Eduardo Eurnékian achèterait les services postaux d'Arménie

Le Gouvernement arménien a approuvé un projet d'amendement à la loi sur le programme 2006-2007 pour la privatisation des biens de l'État, qui propose d'ajouter la société Haypost, service postal national, sur la liste des entreprises sujettes à la privatisation, a rapporté le quotidien Zhoghovurd.

« Le milliardaire arméno-argentin Eduardo Eurnekian a rencontré le Premier ministre Hovik Abrahamian, puis le gouvernement a lancé un processus visant la privatisation de Haypost. » Zhoghovurd a appris qu'Eurnekian lui-même a exprimé le souhait d'acheter Haypost, mais il y a toujours eu des propositions, mais les autorités se sont abstenues de faire affaire jusqu'ici. « Il semble que la situation économique [en Arménie] n'est vraiment pas bonne, » a conclu Zhoghovurd.



Regarder les...

Suite de la page 7

11% de chance de succès.

Que le parti accède au parlement ou non, il va provoquer un sérieux défi pour M. Erdogan. La question kurde est une épée à double tranchant; si les Kurdes sont élus, ils vont brouiller les cartes politiques de M. Erdogan, qui sera handicapé dans son désir de réédifier la nouvelle constitution, bien que la Turquie puisse marquer des points en démontrant à l'Europe qu'elle est sur la voie démocratique, comme société inclusive.

Toutefois, si les Kurdes ne parviennent pas à entrer au Parlement, ils seront justifiés de prendre les armes et de se battre pour leurs droits. Jusqu'à présent, les négociations avec le gouvernement n'ont mené nulle part. Dans cette campagne électorale, toute la rhétorique et les astuces politiques ont été dirigées contre le parti kurde afin d'assurer son échec. Le gouvernement a reproché aux Kurdes de ne pas déposer les armes, ce qui rendait impossible les négociations.

Le gouvernement a même provoqué quelques incidents avec les Kurdes afin de justifier leurs accusations. Les Kurdes se rendent compte que s'ils renoncent complètement aux armes, ils perdront tout pouvoir de négociation et seront laissés à la merci du gouvernement qui dictera ses conditions dans les négociations.

Le pouvoir des Kurdes a été renforcé par le succès de leurs frères du Kurdistan irakien, de Syrie et même d'Iran.

Ainsi, si les Kurdes sont déçus par leur tentative de réussir leur processus démocratique, la Turquie pourrait faire face non seulement à une insurrection interne, mais aussi à une guerre régionale, dont elle aura du mal à se tirer. En termes de realpolitik, les problèmes et le dépeuplement de l'Arménie bénéficient à la Turquie, à l'inverse les problèmes de la Turquie bénéficient à l'Arménie.

Le Premier ministre, Ahmet Davutoglu, à l'improviste, a introduit la question arménienne dans sa campagne électorale, pour des fins esthétiques et pour attirer les électeurs chrétiens de certains partis, y compris l'AKP au pouvoir, qui ont enrôlé des candidats arméniens.

Ainsi, Markar Essayan, éminent chroniqueur de la presse turque, s'est joint à l'AKP. Garo Paylan est un candidat pour la paix et la démocratie, et Selina Dogan est sur la liste du principal parti d'opposition, le Parti républicain du Peuple. Ces candidats seront certainement respecter dans leurs partis respectifs, mais Dogan a également forgé sa propre plate-forme personnelle, déclarant : « Nous ne sommes pas égaux. Légalement, sur le papier, oui, mais en fait, non... Par exemple, il n'y a pas d'officiels arméniens dans le gouvernement, il n'y a pas de police arménienne, il n'y a pas de juges arméniens dans ce pays. Je vais lutter contre cette discrimination. »

Էրտողանի յայտարարութիւնները անարձագանգ չմնացին Հայաստանի մէջ: Այսպէս. «Արմէնփրես» կը գրէ որ Խորհրդարանի փոխ-Նախագահ Էտուարդ Շարմազանով անդրադարձաւ Թուրքիոյ Նախագահի յայտարարութիւններուն ու ըսաւ որ «Էրտողանի հերթական հակահայ յայտարարութիւնը ցոյց կու տայ իր իրական քաղաքական դեմքը, այն որ իրականութեան մէջ Թուրքիոյ նախագահը հակահայ տրամադրութիւններ ունի, իսկ Թուրքիոյ քաղաքական վերնախաւը տակաւին հեռու է ժողովրդավարութենէն»: Ըստ իրեն, այսպիսի յայտարարութիւններ ցոյց կու տան թէ Թուրքիոյ քաղաքական վերնախաւը կ'ապրի «հայկական բարդոյթ»ով ու ասիկա նորութիւն մը չէ: «Ես կը ցաւիմ որ այսպէս է, սակայն իրականութիւնները մէջտեղն են», ըսաւ Շարմազանով:

Իր կարծիքով, փաստ է որ Թուրքիոյ Նախագահն ու անոր աջակիցները ուրուականներ կը փնտռեն եւ ամենուրեք կը տեսնեն հայերու ուրուականը:

«Նիւ Եորք Թայմզ»ի պատասխանը Էրտողանին «Ո՞ր ղեկավարը 1.150 սենեակներով պալատ մը ունի այսօր»



Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Թայմզ Էրտողանի ու Նիւ Եորք Թայմզ թերթի միջեւ բանավեճը չէ վերջացած: Ամերիկեան նշանաւոր թերթը դարձեալ համացանցի վրայով պատասխանեց Նախագահ Էրտողանի վերջին ելոյթին: Նախագահը նախընթաց օր Մերսինի իր ճառատարութեան ընթացքին դարձեալ յարձակած էր Նիւ Եորք Թայմզի վրայ: «Եթէ ամէն կողմը թերթ ըլլայ, ի՛նչ կը գրէ» ըսած էր Էրտողան յիշեցնելով որ այդ թերթը ատենին նոյն ոգիով հրատարակած էր Սուլթանապատիլ-համիտին վրայ կատարուած յարձա-

կումին լուրը, Մենտրեսին կախաղան հանուելու լուրը, Նախագահ Էօզալին մահուան լուրը: Այդ թերթը բոլոր այս լուրերը հաղորդած էր Թուրքիոյ հասցէին նախատինք-ներով: Հիմա նոյն կեցուածքը կայ իր անձին նկատմամբ, ըսած էր Նախագահը:

«Ճումհուրիյէթ»ի համաձայն Նիւ Եորք Թայմզ թերթը համացանցի վրայով պատասխանեց ու հարցուց Նաեւ հետաքրքրական հարցում մը. «Աշխարհի ո՞ր ղեկավարը հիմա ունի Սպիտակ Տունէն 30 անգամ անելի մեծ ու 1.150 սենեակներով պալատ մը»:

Հայ եւ այլ նահատակներու յիշատակին... Ծար. էջ 3-Էն

աւելցնելով, որ նախաձեռնութեան ընթացքին ուժեղացած է շրջանի հսկողութիւնը՝ խուսափելու համար հնարաւոր միջադէպերէ:

Ռէյխստանի խօսքով, բարեբախտաբար, ձեռնարկը լաւ ընթացած է, առանց միջադէպերու:

Տեղական լրատուամիջոցները լուսաբանած են զայն: Այն հարցումին, թէ ինչո՞ւ որոշուած է 30 ծառ տնկել, որմէ 10-ը հայ նահատակներուն անունով, Ռէյխստան տեղեկացուցած, որ թիւին մէջ մասնաւոր իմաստ չկայ, պարզապէս նախապէս որոշուած է տնկել 30 ծառ:

Նախապէս ան տեղեկացուցած էր, որ ծառատունկը տեղի պիտի ունենայ Սուրիոյ բնապահպանութեան նախարարութեան հովանաւորութեամբ:

Մարտի մէջ՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած խաչքարի բացում



Յունիս 13-ին Մարտի 4-րդ եւ 5-րդ շրջաններու ղեկավարութեան եւ Մարտի 4-ի համայնքի միաս-նական ջանքերով, ինչպէս նաեւ Մարտի 4-ի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան աջակցութեամբ «Սիթի-Պրահիմ» պուրակին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող խաչքարի բացման արարողութիւն, որուն յաջորդեց օրհնութեան ու օծման կարգ՝ Հայ Առաքելական եկեղեցւոյ քահանաներու ձեռամբ: Այս մասին կը յայտնեն ԱԳՆ մամուլի ծառայու-թենէն:

Ձեռնարկին ներկայ էին 4-րդ եւ 5-րդ շրջաններու ծերակուտական-քաղաքապետ Պրուսօ Ժիլը, Մարտի 4-ի մէջ ՀՀ հիւպատոս Սամուէլ Լալայեանը, փոխքաղաքապետներ, տեղական ինքնակառավարման մարմիններու ներկայացուցիչներ, ֆրանսական եւ հայկական կազմակերպութիւններու նախագահներ, լրագրողներ, հայ համայնքի բազմաթիւ ներկայացուցիչներ:

Մարտի 4-րդ եւ 5-րդ շրջաններու հայ փոխքաղաքապետ Արթուր Օհաննիսեան իր խօսքին մէջ բացատրեց խաչքարի խորհուրդը հայ ժողովուրդի պատմութեան, մշակոյթի եւ հոգեւոր կեանքին մէջ՝ միաժամանակ նշելով, որ խաչքարը նուիրուած է ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան զոհերուն, այլեւ արեւելեան քրիստոնէյայ այլ փոքրամասնութիւններուն, որոնք սարսափելի փորձութիւններու մէջէն անցած են:

Մարտի 4-րդ եւ 5-րդ շրջաններու ծերակուտական-քաղաքապետ

Պրուսօ Ժիլ իր խօսքին մէջ նշեց, որ խաչքարի կանգնեցման նպատակը Հայոց Ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակը վառ պահելն ու գալիք սերունդներուն իրազեկելն է 1915-ի հայերու հանդէպ տեղի ունեցած ցեղասպանութեան մասին՝ յիշատակելով, որ 100 տարի առաջ հայ ժողովուրդին նկատմամբ տեղի ունեցած է ցեղասպանութիւն պարզապէս այն պատճառով, որ հայ էին եւ քրիստոնէյայ: Ան նշեց նաեւ, որ որեւէ խաչքարի, յուշարձանի եւ, ընդհանրապէս, պատմութեան էջերը յիշատակող եւ լուսաբանող կառոյցներու առկայութիւնը ապագայ սերունդներուն դաստիարակելու եւ ոգեկոչելու ամենագլխաւոր միջոցներէն մէկն է:

Մարտի 4-ի մէջ ՀՀ հիւպատոս Սամուէլ Լալայեան իր ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետին խաչքարի տեղադրման առիթով՝ կարեւոր համարելով վերջինիս հետեւողական գործունեութիւնը Ցեղասպանութեան ժխտման դէմ պայքարին: Այնուհետեւ ան անդրադարձաւ հայ-ֆրանսական բարեկամական յարաբերութիւններուն եւ հայ համայնքի ու տեղական իշխանութիւններու արդիւնաւետ ու լայնածաւալ աշխատանքներուն՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած բազմաթիւ ձեռնարկներու իրականացման ծի-րէն ներս:

Ձեռնարկի աւարտին «Սահակ Մեսրոպ» երգչախումբի կատարմամբ հնչեցին Ֆրանսայի եւ Հայաստանի պետական օրհներգերը, որուն յաջորդեց ծաղկեպսակներու զետեղման արարողութիւնը:

«Մեր Պատմութիւնը... Ծար. էջ 11-Էն

Համաշխարհային պատերազմը կ'աւարտի, ճափոն կը յանձնուի, ու գերիները ազատ կ'արձակուին: Այս պայմաններուն մէջ Լուիս պետք էր ընտրութիւն կատարէր:

Լուիս չսպանեց ճափոնի բռնապետը, այլ որոշեց իր «վրեժ»-ը լուծել «նոր կեանքեր» կերտելով: Ան իր կեանքը նուիրեց հոգեւոր եւ մարդասիրական առաքելութեան՝ նոր կեանքեր եւ հաւաքականութիւններ ստեղծելով...:

Եւ հայուն պատմութեան փորձն ալ այդպէս էր: Ցեղասպանութենէն ետք «նոր»-ը շինելով է, որ հայը վերապրեցաւ եւ ոչ թէ սպաննելով, այլ

«նոր»-ն է, որ հայուն կու տայ ուժը եւ վճռակամութիւնը շարունակելու իր «աւանդ»-ը քիչ մը ամէն տեղ եւ միկնչել Թոքիօ: Այդ «նոր»-ին ուժով է, որ Ռազմիկին գաւազը ու բոլոր հայ մանուկները պիտի շարունակեն ներկայացնել Ցեղասպանութեան սիւնարթիւնը՝ յիշելով եւ պահանջելով...:

Իսկ այսօ՞ր: Հայը պիտի շարունակէ իր երթը հարիւրամեակէն անդին, պիտի շարունակէ «նոր» կեանքեր կերտել ամէն տեղ, որովհետեւ «նոր» կեանքեր կերտելով է, որ հայը պիտի կրնայ զօրաւոր կերպով յիշել, յիշեցնել, պահանջել ու տակաւին պահանջատեր ըլլալ թէ՛ Թուրքիոյ «պատմութիւնը դաժան» է, պետք է «սրբագրուի», բայց նաեւ «նոր»-ը հատուցուի...:

ԱՄԵՆԱԶՕՐ ՉԱՐԸ



ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Ալեյի վատ ու յուսահատեցնող բան չկայ, քան երբ կը զգաս, որ ամբողջ կեանքիդ ընթացքին հաւատացածդ ու անոր համար պայքարածդ, քարոզածդ, դաստիարակածդ փունճ է եղեր, անհիմաստ, աւազի վրայ կառուցուած դղեակ...

Առակներ, առածներ, հեքիաթներ... բարութեան ու բարեգործութեան մասին, մարդկային առաքինութեան մասին, մաքուր նկարագրի մասին... ու յանկարծ կը զգաս, որ այդ բոլորը սուտ են, անհիմն, միայն ցանկատեսութիւն, ինքնախաբէութիւն...

Պատրանաբաթի, շուար ու մոլոր կանգնած ենք բոլորս ու մեր աչքերուն առջեւ կը տեսնենք մեր աշխարհին թաւալգլոր իյնալը անդունդ, տարտարոս, դժոխք:

Այս ինչպէ՞ս հեղեղի նման կը յառաջանայ չարը, ոտնատակ ընելով բարին, գեղեցիկը, մաքուրը... ինչպէ՞ս. ան ալ ի հեճուկս միջազգային «կազմակերպուած հակայարձակում»ի անցած ուժերուն:

Սուտին ու կեղծիքին այսօր բացայայտ օգտագործումը «Մեծ» կոչուած պետութիւններու կողմէ, միմիայն անոնց ստորնութեան վկայագիրն է: Հապա ի՞նչ ըսել օր ցերեկով տեղի ունեցող արիւնահեղութեանց, բռնաբարութեանց, քաղաքներ ամբողջ աւերակոյտի վերածումին, պատմական-հնագիտական կոթողներու ջարդին, մարդկային կեանքի յառաջդիմութիւնը խափանող ու քաղաքակրթութիւնը հարիւրաւոր տարիներ դէպի խաւար դարեր տանող այս անմարդկային հրաբխային լաւային... Ի՞նչ ըսել:

Բայց, որո՞ւ կ'ըսես. Արեւմուտքի «գերիզօր, գերզարգացած» երկիրներուն, ուր Միջին Արեւելքի երկիրներուն մէջ պատահածներուն զուգահեռ, «ալեյի տարրական, ալեյի կենսական» հարց մը լուծելու համար ցոյցերու ելած են, մեծ, շատ կարելոր հարց մը՝ միասնականներու ամուսնութիւնը...

Վերջը ի՞նչ է ասոր: Վերջ ունի՞: Աստուած նոր ջրհեղեղով պիտի պատժէ չարերը. ի՞նչ բանի կը սպասէ. Յիսուսի երկրորդ գալստեա՞ն պիտի լուծին այս խնդիրները, ի՞նչ բանի կը սպասէ:

Տեղ մը կը հասնինք, ուր ալ հանդուրժելի ու բարի տրամադրութեամբ կեանքը շարունակելը անհիմաստ կը դառնան: Ի՞նչ ըսենք, հաշտուի՞նք չարին հետ ու կռնակ դարձնենք բարիին:

Ու դարձեալ կը դիմենք Աստուծոյ. - Այս լեղի բաժակը հեռացուր մեզմէ ամենակարող Աստուած, եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն...

Համաշխարհային դրամատունը կանխատեսած է Հայաստանի տնտեսական աճը պիտի կազմէ 0.8 տոկոս

Համաշխարհային դրամատունը կը կանխատեսէ, որ 2015թ. Հայաստանի տնտեսական աճը պիտի կազմէ 0.8 տոկոս, իսկ յաջորդ երկու տարիներուն պիտի կարգաւորուի՝ 2016թ. հասնելով 2.7 տոկոսի, իսկ 2017թ.՝ 3 տոկոսի:

ՀԲ-ի հրապարակած «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ» զեկոյցին մէջ կը նշուի, որ համաշխարհային տնտեսութեան աճը 2015 թուականին պիտի վատթարանայ՝ 3-էն հասնելով 2,8 տոկոսի:

Զեկոյցի հեղինակները ատիկա կը բացատրեն քարիւղի գիններու անկման եւ զարգացող տնտեսութիւններու համար վարկերու արժեքի բարձրացման ազդեցութիւններով:

Վարկերու արժեքի բարձրացումը Համաշխարհային դրամատունը կը կապէ ամերիկեան դաշնային պահուստային համակարգի կողմէ տոկոսադրոյքներու բարձրացման հետ: «ԱՄՆ-ի մէջ տոկոսադրոյքներու ակնկալուող բարձրացումը յառաջիկայ ամիսներուն պիտի յանգեցնէ ձեւաւորուող շուկայական տնտեսութեամբ երկիրներու եւ զարգացող երկիրներու համար վարկերու բարձրացման», - կը բացատրուի հաղորդագրութեան մէջ:

Համաշխարհային տնտեսութեան անկումը վերլուծաբանները կը կապեն նաեւ աշխարհաբաղաբական գործընթացներու հետ: «Համաշխարհային տնտեսութեան աճի քայլերու դանդաղումը քարիւղի գիններու անկման եւ աշխարհաբաղաբական լարուածութեան հետեւանք է: Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ տարածաշրջանին մէջ ատիկա կապուած է նաեւ անուղղակի ազդեցութիւններով, ներառեալ, Ռուսաստանի շուրջ ստեղծուած իրավիճակով», - կը նշուի զեկոյցին մէջ:

ՀԳ-ի վերլուծաբաններու գնահատականով՝ տնտեսական աճի քայլերը զարգացող երկիրներու մէջ այս տարի կը կազմեն 4,4 տոկոսի մակարդակի վրայ, 2016թ. այդ ցուցանիշը պիտի հասնի մինչեւ 5,2 տոկոսի, իսկ 2017թ.՝ 5,4 տոկոսի:

Համաշխարհային դրամատունը նուազեցուցած է նաեւ Հայաստանի հարեւան պետութիւններու՝ Վրաստանի եւ Ատրպէյճանի տնտեսական աճի ցուցանիշի կանխատեսումները: Վրաստանի համար 2015 թուականին կանխատեսուած է 2 տոկոս աճ, 2014 թուականի՝ 4.8 տոկոսի փոխարէն, իսկ Ատրպէյճանի մէջ 1.5 տոկոս աճ՝ նախորդ տարուան 2.8 տոկոսի փոխարէն:

ԷԱՏՄ անդամ պետութիւններէն Ռուսաստանի համար Համաշխարհային դրամատունը կանխատեսած է ՀՆԱ 2,7 տոկոսի անկում՝ 2014-ի 0.6 տոկոս աճի փոխարէն, Պելաճուսիոյ համար՝ 3.5 տոկոս անկում՝ նախորդ տարուան 1.6 տոկոս աճի փոխարէն, իսկ Ղազախստանի համար 1.7 տոկոս աճ՝ 2014 թուականի 4.3 տոկոս աճի փոխարէն:

Կարո Փայլանի մեկնաբանութիւնը Կարելորը երեք Հայ երեսփոխաններու գոյութիւնը չէ, կարելորը անոնց ըսելիքն է

7 Յունիսի երեսփոխանական ընտրութիւններու արդիւնքով երեք Հայեր խորհրդարան մուտք գործեցին որպէս Հայկական ինքնութեամբ երեսփոխաններ: Երեքն ալ տարբեր կուսակցութիւններէ էին ու երեքն ալ բնականաբար կոչուած էին պաշտպանելու իրենց կուսակցութեան մայր գաղափարները: Մարգար Էսաեան պիտի կանգնէր Ա-ԳԵ-ՓԵի գծին վրայ, ՍԵԼԵԱ Տոդան պիտի գործէր ԵԵ-ՅԵ-ՓԵի քաղաքական տեսանկիւնէն, իսկ Կարո Փայլան պիտի գործէր ՀԵ-ՏԵ-ՓԵի գաղափարախօսութեամբ: Միայն թէ այս երեք երեսփոխաններէն Կարո Փայլան մասնաշատկութիւն մը ունէր: Ան պիտի գործէր ո՛չ միայն որպէս ՀԵ-ՏԵ-ՓԵԷ Իսթանպուլի երեսփոխան, այլ նաեւ որպէս ՀԵ-ՏԵ-ՓԵի հիմնադիր անդամ:



Կարելորը առաջին երկու տարիներու ընթացքին անոր երդիքին տակ մեկտեղուեցան բոլոր ինքնութիւններն ու ժողովրդավարական խմբաւորումները: Հիմա այս կուսակցութեան մէջ բոլոր ինքնութիւնները տեղ ունին ու իրենք ալ կը պաշտպանեն հաւասարութեան սկզբունքը: Կողմնակից են ժողովրդավարութեան մը որուն առջեւ «Բայց», «Սակայն» եւայլն չկայ: Փառք տանք որ Թուրք ժողովուրդը անցք տուաւ այսպէս «Բայց» կամ «Սակայն» չճանչցող ժողովրդավարութեան մը, ըսաւ Փայլան: Փայլան աւելցուց որ իր կուսակցութիւնը այս ուղղութեամբ շատ յառաջացաւ ու հիմա միւս կուսակցութիւններն ալ քայլ կը յարմարցնեն այս շարժումին ու Թուրք հաւաքականութեան կը նուիրեն քաղաքական հաւասարութիւններու վրայ հիմնուած նոր Մայր Սահմանադրութիւն մը», ըսաւ ան:

Փայլան ընտրութիւններու արդիւնքին մասին խօսեցաւ «Փերիս-գոփ»ի հաղորդումի ընթացքին եւ ընդգծեց թէ իր կուսակցութեան մայր գիծն է ժողովուրդներու հաւասարութիւնը: Այս կապակցութեամբ ալ երեք Հայ երեսփոխաններու հարցով ըրաւ ուշագրաւ յայտարարութիւն մը: «Կարելորը խորհրդարանի մէջ երեք Հայ երեսփոխաններու գտնուիլը չէ, կարելորն այն է թէ ի՞նչ կ'ըսեն անոնք: Իմ կուսակցութեանս մօտ հաւասարութեան սկզբունքը առաջին կարգերու վրայ պիտի ըլլայ», ըսաւ Փայլան:

Փայլան ըսաւ որ ՀԵ-ՏԵ-ՓԵին այս յաջողութիւնը չորս տարուան հետեւողական աշխատանքի արդիւնք է եւ յաջողութիւնը զարմանալի չէ այլեւս: Կուսակցութեան հիմնար-

HSBC պիտի դադրեցնէ իր գործունեութիւնը Թուրքիոյ մէջ



HSBC դրամատունը, որ կը հանդիսանայ աշխարհի ամենախոշոր դրամատուններէն մէկը, որոշած է դադրեցնել ծառայութիւններու մատուցումը Թուրքիոյ մէջ եւ վաճառքի հանած է այդ երկրի մասնաճիւղը:

Հրամատան Թուրքիոյ մասնաճիւղի ղեկավարութեան կողմէ տարածուած յայտարարութեան մէջ կ'ըսուի, որ ծառայութիւններու մատուցումը պիտի շարունակուի մինչեւ վաճառքի իրականացումը:

Դրամատան Թուրքիոյ մասնաճիւղի ղեկավարութեան կողմէ տարածուած յայտարարութեան մէջ կ'ըսուի, որ ծառայութիւններու մատուցումը պիտի շարունակուի մինչեւ վաճառքի իրականացումը:

Դրամատան այս քայլը պայմանաւորուած է ծախսերը կրճատելու անհրաժեշտութեամբ՝ ֆինանսական կայունութիւնը պահպանելու համար: Կը նշուի նաեւ, որ HSBC Turkiye-ով հետաքրքրուած է չինական ICBC դրամատունը:

Ermanihaber.am-ը կը հաղորդէ՝ վկայակոչելով թրքական «Milliyet» թերթի կայքը՝ որ 2014 թուականի

Թուրքիա կը մերժէ ընդունիլ Եւրոխորհրդարանի Թուրքիոյ մասին տեղեկագիրը

Տեղեկագրին անհանգստացնող կետերէն մէկն է՝

Հայոց Ցեղասպանութեան Եւրոխորհրդարանի կողմէ ճանաչումը

Ինչպէս պիտի յիշուի, Թուրքիոյ ու Եւրոխորհրդարանի միջեւ ցրտութիւն մը ստեղծուած էր երբ Եւրոխորհրդարանը 1915-ի հարիւրամեակի օրերուն ճանչցած էր Հայոց Ցեղասպանութիւնը: Այդ ցրտութիւնը ալ աւելի շեշտուեցաւ երբ հրատարակուեցաւ Եւրոխորհրդարանի կողմէ 2014 թուականի Թուրքիոյ մասին պատրաստուած տեղեկագիրը: Այս տեղեկագիրը կը բովանդակէ Թուրքիան անհանգստացնող տուեալներ:

Թուրքիոյ Եւրոմիութեան Նախարար ու Աւագ Բանագնաց Վոլքան Պօզքըրը վերջերս մամլոյ ասուլիս սարքելով յայտարարեց թէ Եւրոխորհրդարանի Թուրքիոյ մասին 2014 թուականի տեղեկագիրը անընդունելի է Թուրքիոյ կողմէ ու եղէ այդ տեղեկագիրը յանձնուի Թուրքիոյ մատուցողներէն, անմիջապէս տա պիտի վերադարձուի, Թուրքիա անընդունելի պիտի հռչակէ զայն:

Ինչպէս ընդգծած է Պօզքըրը, տեղեկագրին մէջ Թուրքիան անհանգստացնող երեք գլխաւոր նիւթեր կան, ուստի Թուրքիա նախապէս պահանջած էր որ անոնք դուրս առնուին տեղեկագրէն, բայց չառնուեցան: Ասոնցմէ առաջինն է Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը: Երկրորդն է՝ ՓԶՔին ահաբեկիչ կազմակերպութիւններու ցանկէն դուրս հանուիլը: Երրորդն ալ այն արտայայտութիւններն են որոնք կը կասեցնեն Եւրոմիութեան հետ Թուրքիոյ. բանակցութեանց գործընթացը:

«Այս տեղեկագիրը պատմութեան մէջ պիտի արձանագրուի որպէս Թուրքիոյ կողմէ մերժուած առաջին տեղեկագիրը», ըսաւ Պօզքըրը, որ աւելցուց որ կը սպասուէր որ Եւրոխորհրդարանը աւելի քաջալերական ու զօրակցական

արտայայտութիւններ ունենար Կիպրոսի մասին, ուր հիմա կողմերը կը գտնուին լուծման սեմին վրայ:

Բացի Վոլքան Պօզքըրէ, Թուրքիոյ Արտաքին Նախարարութիւնն ալ յայտարարեց որ տեղեկագիրը Թուրքիոյ կողմէ անընդունելի է Թուրքիոյ մասին բազմաթիւ կալուածներէ ներս գրի առնուած անհիմն պնդումներու հետեւանքով:

ԵՐՈՒՅՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐԱԳ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մամուլը կը հաղորդէ թէ Եւրոխորհրդարանը կայծակնային արագութեամբ պատասխանեց Վոլքան Պօզքըրի այն յայտարարութեան թէ Թուրքիա պիտի մերժէ ընդունիլ տեղեկագիրը:

Եւրոխորհրդարանի Թուրքիոյ մասին տեղեկագրող Հոլանտացի խորհրդարանական Քաթի Փիրի ըսաւ որ կը մտածէ թէ Թուրքիոյ իշխանութիւններու ցուցաբերած հակազդեցութիւնը անտեղի է, այդպիսի հակազդեցութեան մը պատճառ չկայ: Ան աւելցուց որ այսպիսի մերժում մը կը նշանակէ նախատել Եւրոխորհրդարանը: «Դուք չէք կրնար պահանջել որ Եւրոխորհրդարանը ուրանայ երկու տարի առաջ ընդունուած որոշումը: Տեղեկագրին մէջ Հայոց Ցեղասպանութեան պարբերութիւն մը չկայ, պարզապէս յիշեցում մը կայ նախապէս ընդունուած որոշումին, ըսաւ Քաթի Փիրի:

Քաթի Փիրի ընդունեց որ այս վերջին տեղեկագիրը քննադատութիւններ ունի Թուրքիոյ հասցէին, բայց ասոնք չինիչ քննադատութիւններ են եւ մեր պարտականութիւնն է ատիկա, ըսաւ Փիրի:

Քիմ Զարտաշեան «Թվիթթըր»ի մէջ ամենաազդեցիկ կիներէն մէկն է

«Յաֆֆիկըն Փոսթ»ի բրիտանական տարբերակը հրապարակեց «Թվիթթըր»ի ամենաազդեցիկ 100 կիներու ցանկը, ուր Քիմ Զարտաշեան տեղ կը գրաւէ առաջին տասնեակի մէջ ու 9րդ դիրքի վրայ է: Համաշխարհային աստղի էջը կը գործէ 2009էն ի վեր:



Զարտաշեան ունի 19 հազար հրապարակում եւ 32.5 միլիոն ընթերցող:

Պարբերականը ազդեցիկութեան վարկանիշը կազմելով, չէ սահմանափակուած միայն ընթերցողներու քանակութեամբ, այլ նկատի ունեցած է նաեւ օգտատիրոջ ազդեցութիւնը ընթերցողներու վրայ: Օրինակ՝ Պիտերսի ընթերցողներու քանակը կը կազմէ 14 միլիոն եւ ան 36-րդ դիրքի վրայ է քանի որ իր էջի վրայ ընդամենը ութ անգամ գրառում կատարած է:

«Թվիթթըր»ի մէջ ընթերցողներու ամենամեծ թիւը ունի երգչուհի Քեթի Փերի, որու ընթերցողներուն թիւը կը կազմէ 70 միլիոն եւ ան ընդամենը 10 միլիոնով կը գերազանցէ Ամերիկայի Առաջին Տիկին Միշել Օպամայի կայքէջի ընթերցողներու թիւը: Սակայն Քեթի Փերի 17-րդ դիրքի վրայ է այս ցանկի վրայ:

«Հաֆֆիկըն Փոսթ»ի բրիտանական տարբերակի այս ցանկին մէջ առաջին կարգի վրայ է Պրիթի Սփիրս, որու կը յաջորդեն երգչուհի Արիանա Կրանտէ, Նիքի Մինսթ, Զլոյէ Զարտաշեան, Իկի Ազալիա, Լէյտի Կակա: Իսկ ցանկի վերջին կարգերու վրայ են Տեմի Սուր, Ճեսիքա Սիմփսըն, դերասանուհի Քուին Լաթիֆա:

Մկրտիչ Սերժիմշէք դարձեալ Միւռնօրինութեան պատրաստեց Միւռնի կաթսան

Հաճոյքով կը հաղորդենք որ մեր յայտնի ազգայիններէն Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենադպիր ու մեր եկեղեցիներու բարերար Մկրտիչ Սերժիմշէք այս օրերուն Մայր Աթոռ Ս. Էջմիածին գացած է որպէսզի անգամ մը եւս կատարէ պարտականութիւն մը զոր կամաւոր ու սիրայօժար կերպով ստանձնած է երկար տարիներէ ի վեր: Ասիկա իրեն համար սրբազան աւանդութիւն մըն է այլեւս: Ամեն Միւռնօրինութեան արարողութեան նախօրեակին Մայր Աթոռ երթալ ու փայլեցնել Միւռնի կաթսան, զայն պատրաստել միւռնի նոր օրինութեան:

Ինչպէս յայտնի է, Միւռնի օրինութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենէն իմաստալից ու հետաքրքրական արարողութիւններէն մէկն է, դարերու խորքէն եկող հին միւռնի մասնիկը միշտ կը խառնուի նոր միւռնին ու այդ կերպով կ'արտայայտէ մեր եկեղեցիին դարաւոր անցեալը: Մկրտիչ Սերժիմշէք ոչ միայն Մայր Աթոռի, ո՛չ միայն Իսթանպուլահայ եկեղեցիներու այլ նաեւ արտասահմանի բազմաթիւ Հայկական եկեղեցիներու բարերարն է, բարերար մը որ իր սպիտակ շապիկը հագնելով իր արհեստը սիրայօժար կը գործադրէ միաժամանակ իր անձնականէն նուիրելու բոլոր նախանիւթերը: Կարելի է ըսել որ մեր բազմաթիւ եկեղեցիներէն



Նկարին մէջ՝ Մկրտիչ Սերժիմշէք Միւռնի կաթսան փայլեցնելու ընթացքին

Ներս կայ Սերժիմշէքին ազգասեր ու եկեղեցասեր ոգին շունչ մը:

Հրանդ Տինքի անունով այգի՝ Տիարպէթիի մէջ



Տիարպէթիի քաղաքային խորհուրդը քաղաքի երկու այգիներու անուանումներուն վերաբերեալ որոշումներ ընդունած է:

Տիարպէթիի քաղաքային խորհրդի որոշումով՝ Տիարպէթիի Ուրֆա Եօլու փողոցի եւ Էլազըղ Եօլու փողոցի հատման վայրին մէջ գտնուող այգին վերանուանուած է 1992-ին սպաննուած քիւրտ լրագրող Հաֆըզ Աթթեմիրի անունով: Իսկ Տիարպէթիի Գագիլեր թաղամասի այգին վերանուանուած է «Ակօս» պարբերականի նախկին խմբագիր, 2007-ին սպաննուած Հրանդ Տինքի անունով:

Շրջանի ղեկավար Ալի Այտընը ըսած է, որ այգիները կ'անուանակոչուին Տինքի եւ Աթթեմիրի անուններով, որպէսզի ապրեցնեն այն պայթարը, յանուն որուն անոնք զոհուեցան:

Այտընը տեղեկացուցած է նաեւ, որ այգիներու բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ օրերուն՝ զոհուած լրագրողներու ընտանիքներուն մասնակցութեամբ:

Visit ABAKA online, in color, current and past issues www.tekeyanmontreal.ca

Յայտարարութիւն

Այսու կը տեղեկացնենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը Օգոստոս 16-էն սկսեալ, որ Է Աստուածամօր Վերափոխման Տօնը (Խաղողօրհնէք), կը տրամադրէ Կիրակնօրեայ օթոպիսի սպասարկութիւն, դիրացնելու համար հաւատացեալներու մասնակցութիւնը Ս. Պատարագներուն:

Մանրամասնութեան եւ արձանագրութեան համար կը խնդրենք հեռաձայնել Եկեղեցւոյ քարտուղարութեան՝ (514) 279-3066 թիւին:

Անդրանիկ Կարապետեան՝ Երիտասարդներու աշխարհի ախոյեան

Լեհաստանի Վրոցլա քաղաքին մէջ Յունիս 4-13 կ'ընթանայ ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնութիւնը:

Հայաստանը ներկայացուած է երեք ծանրորդներով՝ Անդրանիկ Կարապետեան (77 քկ քաշային կարգ), Նորայր Աւետիսեան (85 քկ) եւ Սիմոն Մարտիրոսեան (գերծանր):



Ըստ Artsakhpress.am-ի՝ Յունիս 9-ին, մասնակցած է Եւրոպայի մեծահասակներու առաջնութեան պրօնզէ մետալակիր Անդրանիկ Կարապետեանը:

Հայ ծանրորդը հրաշալի ելոյթ ունեցած է եւ երկամարտի 355 քկ (155+180) արդիւնքով նուաճած է ոսկէ մետալ:

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

ԼԱԻԱԼԻ Ս. ԽԱՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՊԱՅՄԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ (ՎԱՐԴԱՎԱՌ) ՏԵԱՌՆ ՄԵՌՈՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՌԻԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՌԻԿՕ (RIGAUD)

ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒԼԻՍ 2015

ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ՔԱՐՈՉԷ

ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՍԿԻՉԲ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԸ 12:30-ԻՆ

ՕԹՈՊԻՒՍՆԵՐԸ ՊԻՏԻ ՄԵԿՆԻՆ ՀԵՏԵԻԵԱԼ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ.-
NORMANDIE-ԷՆ (RUE SALABERRY) ԵՒ ԼԱԻԱԼԻ Ս. ԽԱՉ
ԵԿԵՂԵՑԻԷՆ (ST. MARTIN O.) ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ

ՍԱԿ - \$25 (ՆԵՐԱՌԵԱԼ ՕԹՈՊԻՒՍ ԵՒ ՃԱՇ)

ՍԱԿ - \$15 (ԱՆՋՆԱԿԱՆ ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՎ ԵԿՈՂՆԵՐՈՒՆ
ՆԵՐԱՌԵԱԼ ՃԱՇ)

ՏԵՂԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ ՀԱՃՅԷՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ ՉՈՑԳ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ՝

ՄՈՆԹՐԷԱԼ (514) 279-3066 ԼԱԻԱԼ (450) 687-5355

ՀՈՎԻԹ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարգար Աղաջանեան՝ փորձառու ֆութպոլիստ, Իրանի ներկայ հաւաքական խմբի մարզիչ

Վերջերս, «Ալիք» օրաթերթի մարզական բաժնի մէջ, թարգմանաբար անդրադարձած էին իրանահայ մի քանի ֆութպոլիստների անցած մարզական ուղիին:

Յիշեալ նիւթը առիթ հանդիսացաւ գրուցելու փորձառու ֆութպոլիստներից մեկու մը՝ Մարգար Աղաջանեանի հետ:

Թէեւ Մարգար Աղաջանեանը Իրանի ֆութպոլի ազգային հաւաքականի մարզական հաւաքների պատճառաւ խիստ բազմազբաղ էր, սակայն, ընդունած էր գրոյցի առաջարկը:

Ստորեւ՝ կը ներկայացնենք գրոյցի արդիւնքը:

Չրոյցի ընթացքին նա սապէս ներկայացրեց իր անցած մարզական ուղիին. «Այս մարզածելը ինձ հետաքրքրեց, երբ ես դեռ երիտասարդ էի: Սկսեցի խաղալ առաջին հերթում «Արմէն» թիմին մէջ, «Արմէն»-ի կազմին մէջ մասնակցեցայ Համահայկական խաղերուն եւ ընտրուեցայ անդամակցելու Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան ֆութպոլի երիտասարդական խումբին:

Որոշ ժամանակ անց, հեռացայ «Արարատ»-ից եւ խաղացի «Եսթեղլալ»-ին մէջ: Ապա վերադարձայ «Արարատ»:

Նա այսպէս շարունակեց. «1984 թուականին, խաղացողներուն գրեթէ մեծամասնութիւնը զինուորական ծառայութեան գնաց, այդպիսով գրեթէ խումբը կազմաքանդուեցաւ, եւ ես որոշեցի ֆութպոլը շարունակել «Փաս»-ին ուր տեւեց 15 տարի անկէ ետք երկու տարի խաղցայ «Բահման», «Պանկ Թեճարաթ» եւ «Բարդ» թիմերում: Երեք շրջան ընդգրկուեցայ Իրանի հաւաքականի նախնական ցուցակին, սակայն, միայն մէկ անգամ յաջողած եմ մաս կազմել հաւաքականին: Այդ շրջանում, ընկերական երկու խաղերուն դարձայ հաւաքականի աւագը:

Փորձառու ֆութպոլիստը Իրանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Կեյմուշի հետ իր ծանօթութեան մասին ըսաւ. «Երբ ես «Դամաշ» խումբի գլխաւոր մարզիչն էի, հանդիպեցայ Կեյմուշին ու նա փոխեց իմ կեանքի ուղի: Իմ աշխատանքը



սկսայ Իրանի հաւաքականի կազմին մէջ, որպէս՝ անալիզոր:

Մարգար Աղաջանեանը 2014 թուականին առաջին մարզիչն էր, որ մասնակցեցաւ Պրագիայի Աշխարհի առաջնորդութեան խաղերուն: Այս բոլոր տարիների ընթացքին նա միշտ եղած է իրանահայ մարզիկների կողքին:

Այժմ նա սիրայօժար կ'օժանդակէ Հ. Մ. «Արարատ» Կ.-ի ֆութպոլի յանձնախումբին:

Մարգարը մասնակցել է ֆութպոլի մարզական միջազգային դասընթացների եւ ստացել է տարբեր վկայականներ, որոնցից են՝ «CBA», «Asia» եւ «Prolicense»:


Չրոյցի աւարտին նա շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք սատարել էին իրեն, անոնք ըլլան մարզիկներ, թէ ընտանեկան անդամներ:

Հարցազրոյցը վարեց Ա. Միրբեգեանը

Շնորհակալութեամբ ստացանք

Ethnic Armenian Civil Servants in the Ottoman Empire in 1909 -

Dr. Hratch Kouyoumjian



With Contributions by The Baroness Caroline Cox Hanul Sassounian and Hervé Georgelin

Desjardins
Caisse de Chomedey



Hrair Ketchedian, B.A. Écon.
Directeur Général
Représentant en épargne collective pour Desjardins
Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215
Télécopieur : 450 688-1704

Siège social
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4
desjardins.com/caissedechomedey

Association culturelle arménienne Tékéyan
ԹԷԿԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

CAMP SEVAN 2015

6 JUILLET 2015 AU 21 AOÛT 2015 9H-16H



Réservez tôt!

Un camp trilingue qui valorise la pratique du français

Nombre de places limité

130\$ par semaine incluant:
sorties + collations + barbecue hebdomadaire



Initiation à la magie



Informatique



Musique + chant




Théâtre



Danse



Natation



Chasse aux trésors



Excursions



Arts plastiques



Cuisine



Activités sportives



Olympiades

Pour information Seta M. Astourian 514.266.0934 campsevan@yahoo.ca
Centre Tékéyan 514.747.6680 Suivez-nous sur Facebook Camp Sevan!